



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format

Adapt – remix, transform, and build upon the material

ԿՈՂԵՐԻ ՏԱՐԱ-Թ-ՅԱՌ  
15-ԱՄՅԱ ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՐԱՐՈ



ԿՈՂԵՐԻ ՏԱՐԱ-Թ-ՅԱՌ  
ՆԱՄԱԿՆԵՐԸ

ԹԵՎԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԿԱՑՈՒՅԹԻՆ  
ՏԵՐԵՎԱՆ 1894



19434



1  
2  
3

ԱՐԱՐԱ

ԿՈՄՅԱՅԻՏԻՑՈՒՀՈՒ  
ՆԱՄԱԿՆԵՐԸ

16434



A 1 8104



ԹԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ

1934

Դատ. խմբադիր՝ Ա. Հայրյան  
Տել. խմբադիր՝ Տ. Խաչվանքյան

Մըսաբեկչ՝ և Մանավաղյան  
Գլուխիա № 8533 (բ), հբատ. № 2965 պատվ. № 748  
աիցած 3000. հանձնված է արտադրության 14 ազ-  
րէմի 1934 թ., ստորագրված է տպագրության համար  
19 հունիսի 1934 թ.

# ԿՈՄՑԵՐԻՏՈՒՀՈՒ ՆԱՄԱԿՆԵՐԸ

ՎՈՐՊԵՍ ԱՌԱՋԱՐԱՆ

## ԻՄ ԿՈՄՑԵՐԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՆԵՐԻՆ

Սիրելի ընկերներ, խոստովանում եմ, վոր գրիչա  
ղեռ անվարժ ե. այն ինչ, վոր պատմելու լեմ՝ հասա-  
րակ ու պարզ ե լինելու:

Մեր, կոմիերիտականներիս առողջան և սոցիալիստա-  
կան շինարարությունն ու նոր կենցաղը: Յերբ հան-  
դիպում ենք իրար ակումբներում, կամ ուրիշ հասարա-  
կական վայրերում, հաճախ վիճաբանում ենք կենցա-  
ղային հարցերի ջուրջը: Այդ ալդպեա և լինում, վո-  
րովինեակ մենք ենք, վոր կառուցում ենք նոր կեն-  
ցաղը, վորովինեակ ամենից շատ ու ամենից հեշտ մենք  
ենք, վոր կարող ենք ստեղծել այն:

Վիճաբանության ընթացքում տաքարլուն և ան-  
համբեր ենք լինում մենք, չենք խնայում մեկ-մեկի,  
այնքան այնքան ածականներ ենք կացնում իրար՝  
«մեշչանին», «պառնասական», «պահպանողական» և  
այլն, մինչև անդամ ըրոհեմական: Դե իհարկե, ավելի  
հեշտ ե իրար դատափետելը, քան կենցաղ կառուցելը:

Թանի վոր մեր ղեկավար կոմ. կուսակցությունը  
մեծ չափով մեզ ե թողնում կենցաղի կառուցումը, դըա  
համար ալդ ասպարիզում մենք ավելի համարձակ ենք

հանդես գալիս, հին տրադիցիաներին ամենավճռական  
հարվածներն ենք տալիս, բայց նորը կտուցում ենք  
վոչ հեղառւթյամբ։ Խոստովանվենք, ընկերներ, վոր  
մենք յերբեմն տարվում ենք լեռեակայությամբ,  
կոնկրետ պայմաններն աշքաթող ենք անում, զե-  
կավարվում սուբէեկտիվ մղումներով և ծայրահեղու-  
թյունների մեջ ընկնում։ Մենք ել չենք իմանում,  
թե ինչպես մխասում ենք մեր սոցիալիստական գործը։

Ահա թե ինչո՞ւ պիտի լուրջ լինենք և ավելի խո-  
հեմ, վորովհետև մեր ծուռ կենցաղով միմիայն մխա-  
սում ենք մեր աշքի լուրս՝ սոցիալիստական գործը։

Վերջերս ավելի մտազբազ եմ դաշճել այդ նրանից  
և յերենի, վոր տարիները սահում են, և յես ավելի գի-  
տակցական մտրդ եմ դառնում, մասնակցում եմ նոր  
կյանքին ու դիտում եմ այն ավելի լայնորեն ու լուրջ։

Յես զիտեմ՝ այժմ ել դուք սկսեցիք վրդովվել ու  
անհանգստանալ հիշելով կիսատ թօղած վեճերը—կոմ-  
սոմոլիստ Սաքոյի, Աշոտի, կամ Սաթոյի հետ։ Ինչ քան  
ել վիճաբանենք, ելի կիսատ ե մնալու, դրա համար  
ներեցնք, յես ընդհատում եմ ձեզ։

Ստորեվ շարադում եմ իսկական սյուժեն, աշխա-  
տել եմ ներկայացնել մեր կենցաղի քիչ թե շատ ձեռ-  
վակերպվող, ուելիք կողմերը կոնկրետ մոմենտներում։

Իրական կյանքից ե. միայն յես մշակել եմ ու վո-  
րոշ դասավորություն մտցրել «կոմսոմոլիստկալի» նա-  
մակները» նյութի մեջ։

Սիրելի կոմսոմոլիստկաներ, նյութը մշակելու ըն-  
թացքում, ամենից շատ ինկատի ունեցի ձեզ, վորով-  
հետև հանդիպում եմ յերբեմն ձեզանից մի քանիսին,  
խոսում ենք ու պարզվում ե ձեր տրադիկ դրությունը

ամուսնակալուց հետո, մի դրություն, վոր մեղ չի սա-  
ղում ու պետք ե վերացնենք այդ:

Արծու, Սաթիկ, այսպիս աշխալիք, այնքան ակտիվ  
կոմսոմոլիստկաներ ենք.—ամուսնացել եք ու կորցիլ  
հասարակության աշխատանքից, ասում եմ զա մի տա-  
գելիութ, վոր մեղ չի սազում. մենք չպետք ե ին-  
թարկվենք այդ դրույթներին. մենք պետք ե հաղթա-  
հարենք:

Դրա համար յսու մատղրազ ելի ու անհանգիստ.  
յերբ հանդիպում ելի կոմսոմոլիստ ընկերներիս, ել չեյի  
վիճում, գիտում ելի նրանց զործն ու արտահայտու-  
թունը, վորոնում նրանց, վորոնց ոգնությամբ ողիտի  
ամբողջացնեյի այս շարադրությունը:

Նվիրում եմ նրանց, ովքեր պայքարում են հին  
կապերի գեմ, նրանց, ովքեր չեն ընկճվում ու համար-  
ձակ, կառուցում են նոր կենցաղը:

Բուռն սիրով նվիրում եմ նրանց, ովքեր վոչ մի-  
այն հեղափոխական մտքերով, այլ և հեղափոխական  
զգացումներով ու զործով են կապվում ոռոշիալիստական  
շինարարությանը:

Այժմ թողնենք, վոր պատմի կոմսոմոլիստկան, վո-  
րի մասին, սիրելի ընթերցողներ, մենք միտսին կդա-  
տենք:

## ԱՐԱՋԻՆ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Սիրելի Կիմա, ներիր ինձ, հենց առաջին որերից չկարողացա նամակ գրել զբաղված ելի գործերս կարդի բերելով, սրանից հետո խոստանում եմ շարունակ գրել:

Ինձ նշանակեցին կոմսոմոլի գավառային հրահանող-չունի: Տպարանի փակ աշխատանքներից հետո, այս աշխատանքն ինձ վրա շատ լավ և անդրադառնում: Այնպես եմ չաղացել ու կարմրել վոր լեթե անխռո հանդիպեմ քեզ, դժվար թե ճանաչեմ:

Դու ծանոթ չես գավառի կյանքին, այստեղ աշխատանքի մի առանձին հետաքըքիր կողմ կա, մի աշխատանք, վոր սկսում ես ու են ել լավ ես սկսում, ել քեզ բաց չեն թողնում. հենց այդ ե, վոր սիրում եմ:

Հանդիպում եմ նորանոր կոմսոմոլիստների, վորոնց հետ աշխատելը շատ հարազատ և ու ժամանակն աննկատելի յե անցնում: Ի՞նչ և հարկավոր մեղ կոմսոմոլիստներիս, — աշխատանք և աշխատանքի ընկերներ, այսուհետև ամենահետին գյուղն անգամ, ուր գյուղացիներից շատերը նոր, նոր զբագիտություն են սովորում, — քեզ համար բացվում ե աշխատանքի անչափ հետաքըքիր աշխարհ:

Եհս հիշում եմ, սիրելի Կիմա, վոր դու գյուղ գնացողներին լերանի չելիր տալիս և ինձ ել ուղում ելիր համոզել վոր չգնամ: Ինչքան ողտակար ե, լերը աշխատանքդ փոխում ես, ուրիշներին ես սովորեցնում ե

ինքդ ես սովորում։ Ճիշտ ե. կարոտում եմ  
տպարանի ընկերներիս, բայց դա համարակ բան ե.  
ելի ժամանակ կդա, կհանդիպենք ու կիմա, դու ինձ  
կտեսնես, բոլորովին առողջացած և հասունացած։

Դնում եմ գյուղերը, —ինչպես հարմարվում ե, յեր-  
բեմն ձիով, յերեմն վոտքով ու վերադառնում կենտ-  
րոն, վորտեղ մի փոքրիկ սենյակ ունեմ։

Դեռ գյուղի սկզբում անպայման հանդիպում եմ  
կոմսոմոլիստների ու վոնց վոր աշխարհ եմ բերում  
նրանց համար, այնպես են ուրախանում։ Ինձ հետ ան-  
պայման ունենում եմ նոր լրագիրներ, նրանք հա-  
փշտակում են իմ ձեռքից, սկսում են կարգալ Ռւնե-  
նում ենք քաղաքարապետներ, զրուցներ՝ տնտեսա-  
կան, կոռուպիրատիվ հարցերի շուրջը, յերեմն անհրա-  
ժեշտ դեպքում, ունենում ենք և ժողովներ. ամենից  
շատ ուշադրություն եմ դարձնում գործնական աշխա-  
տանքներին։

Գյուղ բջիջներում աղջիկները քիչ են, ալդ ինձ  
շատ ե մտատանջում. մի քանի գյուղերում իմ ջան-  
քերով, կամաց կամաց շատանում են։

Գյուղում աշխատնը դժվար ե. հիշմում ես ինչ շա-  
րություններ եինք սարքում տպարանում, իսկ այժմ  
ինձ չես ճանաչի — այնպես եմ լրջացել, վորովինետե  
աշխատանքը պահանջում ե, յեթե ալզպես չինեմ,  
կոմսոմոլիստներն ինձ չեն հարգի և իզուր կանցնեն  
ջանքերս թեկուզ ալդ լրջության համար յես շատ ու  
շատ ուրախ եմ, արդեն ինձ համարում եմ գիտակից  
մի մարդ, վոր զեկավարում ե ուրիշներին։

Առաջին որերից, ալնպես հեշտ չեր. նրանք ինձ  
վստահությամբ չելին նայում, կարծում ելին, վոր աղ-

Ճիկ եմ, նոքան ել չեմ աշխատելու. իսու այդ կարդում  
ելի՛ նրանց հալացքներում:

Սակայն յես բռնորովին վստահ սկսեցի ինձ ամրաց-  
նել ու գործի հանձնվել:

Անհատապես գնում եյի նայում կոմսոմոլիստների  
տնտեսությունները, քննում ելի գյուղխորհուրդում  
աշխատող կոմսոմոլիստին. իրենց թերությունները  
մեկ-մեկ բացատրում. այդպես մի շարք գործնական  
աշխատանքներից հետո, իրենք սկսեցին իմ հետեւ  
վազել և աշխատանքների աշխարհը բացվեց: Ձնոք  
ըերի նրանց վստահությունն ու ավելի համարձակ  
սկսեցի գործեր:

Ալժմ, յերբ որերով բացակայում եմ գյուղերից,  
կոմսոմոլիստներն իրար են անցնում, ասում են. «ըն-  
կեր կենան չեկավ, կարեոր հարցեր կան, մենք ու-  
ղում ենք, վոր ընկեր լենան ներկա լինի»: Հենց վոր  
գյուղին եմ մտնում, կասես աշխարհ եմ բնում նրանց  
համար, այնպես են վողերպարզում:

Գյուղ դնալիս, մտածում եմ անելիքներիս մտսին,  
իսկ վերադարձին ինձ հաշիվ եմ տալիս թե ի՞նչ եմ  
արել, կոմսոմոլիստների գեմքերը պանորամի նման,  
վորը ողալծառ, վորն աղոս՝ անցնում են աչքիս առա-  
ջից և ինչս ել չեմ իմանում ինչպես եմ աեղ համառում:

Այսպէս վոր, սիրելի կիմա, ժամանակ չեմ ունենում  
ձեզ կարոտելու. զբանից ել վատ բան չեր լինի, յեթե  
զբաղմունք չունենալի, են ժամանակ յերեկի շատ կտխրե-  
լի, իսկ տխրությունն ինձ համար մահից ել վատ եւ

Սենյակումս հանգստանում եմ, զրբերս մաքրում,  
թռչում գավկոմ զեկուցելու աշխատանքներիս մասին-  
ու նոր հրահանգներ ստանալու,

Կոմսոմոլիստական բարեներով՝ լենԱ.

## ԳԱՎԿՈՄՆ ԻՍ ՏՈՒՆՆ Ե

Աշխատանքն ինձ այնպիս և վարժեցրել վոր դան-  
դաղկոտություն չեմ սիրում, այնքան արագ եմ քայ-  
լում, վոր ցուրտ որերին անզամ տաքությունից նեղ-  
վում եմ ։ Աւզում ե ցուրտ լինի, թե բուքը բորան--հագ-  
նովում եմ շատ թեթև։ արդպիս եմ սովորել:

Մտնում եմ գավիոմ, համարձակ ուրախ ու տա-  
քությունից այսերս վառվելով։ Աշխատակիցները դը-  
լուխները բարձրացնում են ու ժամանակա-  
բար, վանց վոր մի տան մարդիկ, այնուիս լավ գիտենք-  
իրար։

Դուն ձախ կողմում շխչիում և զրամեքենան,  
հենց տուաջին բարես ուղղում եմ մազինխատկա Սոնկա-  
մին, վորովհետեւ աչքի ընկնողը՝ առաջին սեղանը նը-  
րանն եւ Սոնկան թեպետ շրթունքները ներկում եւ և  
խոսելու ժամանակ կոտրատվում, բայց նրան սիրում եմ.  
շատ արագ և տպագրում գրությունները, շրջաբերա-  
կանները։ Ինձ համար շատ անսովոր կթվար, յեթե մի  
որ չչխչիսկար Սոնկայի մեքենան, ինձ կթվար, թե աշ-  
խատանքները կանգ են առել Անկարելի լե, վոր արդ-  
շխչիուցի տակ, մարդ չտրամադրվի աշխատելու։

Սոնկան շատ միամիտ ե, յերբ աշխատակիցներից  
մի քանիսն ասում են. «Սոնկա գեղեցիկ ես, Սոնկա,  
սիրում ենք քեզ...» նա վոգնորվում է ու մի քանի  
անզամ նույն գրությունը տպագրում. հավատում եր  
շատ ե հավատում, իսկ գրավելու մեջ՝ սատանա լի:

Դուն աջ կողմում՝ կոմսոմոլիստ կարուի գրասե-  
զանն ե. յեթե մի փոքր ուշադիր լինես՝ նրա մի հա-

տիկ աչքի լարված մկաններից դու կիմանաս, վոր  
նա յե գավկոմի գործավարը, իսկ պաշտօնական դիրքն  
ու դեմքի լրջությունը՝ քեզ կտսի, վոր ինքը նորեկ  
չե, այլ վաղուցվա աշխատակից եւ Սակայն կիմա դու  
չկարծես վոր Կարոն բրուրոկրատ ե. վոչ նա լուրջի, հենց  
թեկուզ նրա համար, վոր ամեն անդամ պատգամավոր  
ե ընտրվում ու գնում ե կոմսոմոլի Համահայաստան-  
յան համագումարը. նա շարքային կոմսոմոլիստ չե,  
ակտիվ եւ նա մի աչքով ե նայում, վորովիետե մի  
աչքը փչացած ե, սակայն մենք այնպես ենք սովորել,  
վոր իսկի չենք նկատում նրա պակասությունը. ինքն  
ել Կարոն ուշադիր ե ու խնամքով կատարում ե գոր-  
ծերը; Յեթե ամեն անդամ Կարուին չտեսնելի իր տե-  
ղում՝ ելի լրիվ չեր թվա գավկոմի աշխատանքը:

Հերթով մոտենում եմ սեղաններին, առաջինան-  
րար աշխատանքները խորանում են ու լրջանում. աշ-  
խատակիցների այդ համապատասխան դիրքին ու նայ-  
վածքին վարժվել եմ, վոնց վոր ապարանում՝ տա-  
ռերին:

Սովորություն ունեմ, ամեն անդամ կազմ բաժնի  
վարիչի սեղանի մոտ մի քիչ յերկար կանգնելու. յերկի  
նրա համար, վոր Սահակը միամիտ կատակներ ե ա-  
նում,—ըստ յս կարծում ելի թե մեռել ես, շվաքդ չեր  
յերնում, ընկեր լենա, կամ թե առում ե, — գավկոմն  
ելի ծաղկեց: Յես ել չգիտեմ ինչու այդ միամիտ կա-  
տակներից սկսում եմ բարձր ծիծաղել, ապա մտնում  
եմ յերկրորդ սենյակը:

Կիմա, եստեղ ավելի ուշադրություն:

Կոմսոմոլի գավառային դեկավարությունն ե. — քար-  
տուղարն ու ագիտապրոպը:

Բարձրաձայն բարեւում իմ ու հենվում քարտուղարի սեղանին, առաջին խոսքը հենց այն ե լինում, քանի բջիջներում եմ յեղել. կապտավուն աշքերը մի վայրկյան հատում ե ինձ վրա ու ելի գրում: Յես սկսում եմ պատմել, նա ինձ ընդհատում ե.—բջիջը հեղինակությունուներն որինակելի՞ յեն, կոլլեկտիվներն ի՞նչ պակասություններ ունեն:

Սկզբներում ջղայնանում ելի, մի քանի սպիտակ թերթիկներ ճղճղում, փչացնում, յերբ չեր թողնում խոսքս վերջացնեմ. հիմա սովորել եմ: Առաջին անգամ նրան հանդիպելիս, պիտի յենթադրես, վոր հպարտ ե ու ընկերական չե, սակայն աշխատանքի ընթացքում լես ճանաչեցի նրան և սկսել եմ հարգել: Ամեն անգամ ասում ե,—այդպիս ուրեմն, և ձեռքը ծանրությամբ դնում սեղանին, դրանից հասկանում եմ, վոր նա իմ աշխատանքներից գոն ե:

Այդ ագիտալրոպղը՝ Սուրենը, հանգիստ տեղը չի նըստում—գրելու կամ խոսելու ժամանակ ծնկները շարժում ե. թղթերը ձեւքին հաճախ ե գնում մյուս սենյակն ու Սոնյայի հետ կատակներ անում. ինձ տեսնելիս, ել չի ուզում բաց թողնել այնքան և խոսում, խոկ յես չեմ սիրում աշխատանքի ժամերին նրանց խանգարել: Ստանում եմ հարկավոր հրահանգներն ու տեղեկությունները և դուրս գալիս:

Դավկոմն իմ տունն ե. բոլորը մի ընտանիքի անդամներ են, տարբեր, տարբեր ու սիրելի:

Պարավողի պես գալիս եմ ջուր վերցնում ու ելիքնում: Մեքենալի չխցիկոցը—Կարոն, Սահակը, Սու-

ըենը կատակասեր ու շարժուն, Հայկի կատավուն  
աչքերի լուրջ նայվածքը, մղում են ինձ նորից դեպի  
գյուղ: Վոնց վոր արյունը շատանում և յերակներին  
մեջ, ել չեմ կարողանում կենտրոնում մալ, ոլիսի  
նորից գյուղ մեկնեմ:

Յերբ կենտրոնում եմ լինում, աշխատանքի ժամե-  
րից հետո, մերոնք գալիս են ինձ մոտ: Սուրենը հա-  
ճախ և գալիս ու յերկար նստում, իսկ Հայկը յերբեք  
մենակ չի լինում, կամ Սուրենի հետ և գալիս, կամ  
մի ուրիշ կոմսոմոլիստի: Հայկի հետ շախմատ եմ խա-  
ղում, նա միշտ ինձ ռմատ և անում, վորի համար  
շատ եմ զայրանում, այդ նրանից և յերկի, վոր նոր  
եմ սովորել շախմատ խաղալ Սուրենի հետ չեմ սի-  
րում խաղալ վորովհետեւ հեղտությամբ տանում եմ  
խաղը: հետո խաղի ընթացքում շատ և խոսում, ա-  
սում ե, վոր յես այնքան ել աղատամիտ չեմ, վոր  
Հայաստանի բանվորուհին զեղջկուհու նման ամաչիու  
ե: Խաղի ժամանակ ձեռքերը հանդիսաւ չի պահում,  
խփում ե ուսիս, յերեսիս, յես ել զալրացած ցրում եմ  
շախմատի քարերն ու մենք կովում ենք:

Սուրենն սկսում ե իր ճառերը, լավ ե խոսում, ի-  
զուր չե, վոր ազիտովրոպ ե, հեռվից դիտողը կասի՝ սրա  
պես աշխատող չկա, բայց ափսոս ալդ խոսելու հետ,  
գործի մարդ չե: Յես իմ անձնական փորձից եմ ասում,  
մինչև նրանից թեզիսներ եմ ստանում, հոգիս զուրս և  
գալիս:

Սուրենը և մի քանի ուրիշ կոմսոմոլիստներ, յերբ  
ինձ մոտ են գալիս, սկսում են ծխել ու ինձ ել ստի-  
պում են, վոր ծխեմ: Ընկերներիս խաթըը չկոտրելու  
համար, մի քանի անդամ փորձեցի, բայց խեղդվում

ելի, բոլորովին ել դուք չե գալիս ծխելը։ Հայկը հա-  
կառակ կարծիք և հայտնում, — բոլորովին անհրաժեշտ  
չե, վոր կինը ծխել իմանա, այդ մնասում և նրա ֆի-  
դիկանին, — ասում և նա։ Յես նրան հարգում եմ ու  
լում հենց նրա համար, վոր նա չի զեկավարվում մի  
քանի կոմսոմոլիստների խելքին փշած տեսակետներով։

Յերեկ նա յեկավ ինձ մոտ մի ուրիշ կոմսոմոլիստի  
հետ։ շատ յերկար շախմատ խաղացինք։ Վերջապես մի  
անդամ կարողացա նրան «մատ» անել — դրա համար  
շատ ուրախ ելի։ իսկ Հայկը ծիծաղում եր։

Ամենից պայծառ նրա նարվածքն և տպվել հիշո-  
ղությանս մեջ։

Լայ աշխատող և Հայկը. կոմսոմոլիստները սիրում  
են նրան, յես նույնպես շատ եմ հարգում։

## ԵԵՆԱ.

### ՍԱՔՈՅԻ ՄԱՍԻՆ

Ի՞մա, ինչպես գիտես, յես գրել սիրում եմ, յերբ  
նստում եմ գրելու, կարծիս հանգստանում եմ։

Անկեղծորեն ուզում եմ բոլորը քեզ պատմել ու  
են ել լավ պատմել։ Յեթե արդքան տարի տպարանում  
չաշխատելի ու տառերին չվարժվելի, ոչ իմանա, իսկի  
գրել չսիրեցի։ Հետո, յես գիտեմ, Կիմա, վոր դու սի-  
րում ես լսել, հիշում եմ, յերբ տպարանում մի վորեն  
բան ելի պատմում, ոչու առանց խանգարելու, համըն-  
դությամբ լսում եյիր։

Քիչ առաջ պառկած եյի և անհանգստանում եյի։  
Ի՞նչպես չպատմեմ կոմսոմոլիստ Սաքոյի մասին։  
Բատրակ եր, հիմի իր տնտեսությունն ունի և չկար-

ծես հասարակ, այլ կոլեկտիվ տնտեսությունը։ Միքանի ուրիշ կոմսոմոլիստների հետ թեպետ դժվարությամբ, բայց գլուխ բերեց, իս ել ելի աջակցում։ Սաքոն ալժմ մտածում և մեքենաներ ձեռք բերելու, հավատացած եմ, վոր այդ ել կիաջողացնի։ Դիտես ինչ գործ անող և ու ինչ լիզու ունի. գլուղ խորհրդի նախագահը նրա հետ հաջվիր լե նստում։ Յեթե կոլեկտիվի մասին պատմեմ, նամակս շատ կերկարի. մենակ Սաքոյի մասին կպատմեմ։

— ՄԵՐ աղջիկ, կոմսոմոլիստները քեզ պես պետք է լինեն, --ասում ե Սաքոն ինձ հանդիպելիս։ Յեթե պատահեր մի որ չհանդիպեյի, չխոսելի նրա հետ, գործակիսառ կհամարելի, վորովհետև այդ գլուղում, աշխատանքներս իրագործելու համար, ամենաամուր հենարանը՝ Սաքոն ե։ Սաքոն սկսել ե շատ կարդալ, նրա համար միշտ գրքեր եմ բերում։ Սաքոն ջրի պես առաջ ե գնում։ Են վոր պիտի պատմեմ, շատ հետաքրքիր ե, ելի Սաքոյի մասին։

Վերադառնալու ելի, նա ցանկություն հայտնից ինձ հետ մինչև կենտրոն գալ—իս ուրախացա, վոր մենակ չեմ լինելու։ Ճանապարհ ընկանք. նա ես անգամ ավելի քիչ եր խոսում և ամաչկոտ եր. մեկ-մեկ ձեռքը մեկնում և ցույց եր տալիս ճանապարհին կից վարելահողերը, ցանքսերը.—բացատրում եր ու ելի լուսմ։

Ցես իմ սովորականն ընկերասիրությամբ հարցեր եյի տալիս, հետո ել կատակի համար հարցը—Սաքոյի բերը ես ամուսնանալու։ Սաքոն ուրախ հենց նայեց աչքերիս...—այ քեզ պես մի աղջիկ ընկեր, վոր ունենալիի...

— ՄԵՐԵ դժվար ե, —ասեցի յես—

Հանկարծ նա վոգեսորվեց.—ընկեր Լենա, ուղում ես  
ասեմ, քեզ շատ եմ հավանում, իսկ թե դու ինձ հա-  
վանություն կ'տաս՝ չեմ իմանում:

Յես ժպտացի ու չ'գիտելի լնչ պատասխանել. նա  
շարունակեց.

— Ընկեր Լենա, դու ել ես կոմսոմոլիստ, յես ել.  
դու մի քիչ ինձանից առաջ ես, հիմա վոր մտքումս  
դրի, քեզ կհասնեմ ու անց ել կկենամ:

Քեզս գալիս եր նրա անկեղծության վրա:

— Սաքհ դու կապված ես գլուղին, քո կոլեկտիվը  
պետք ե շատ առաջ տանես, իսկ յես, Սաքհ վոչ մի  
սեփականություն չունեմ, գլուղում աշխատում եմ,  
բայց լերկար ապրել չեմ կարող.—ասացի յես:

— Յես ել սեփականություն չունեիի, իսկ կոլեկ-  
տիվ տնտեսությունը, դա մեր իշխանության ծրա-  
գրով ա, դրանով զնում ենք դեպի անսեփականություն,  
մի կարծի, ընկեր Լենա, վոր յես սեփականություն  
սիրող տղա լեմ, չե, մի կարծի,—ասեց Սաքոն ավելի  
համարձակ:

— Մենք լավ ընկերներ կմնանք Սաքո, — ասեցի  
յես.

— Բան չեմ ասում, թող եղածս լինի. դուք քա-  
ղաքից լեկած ծիծեռնակներ եք, դուք գլուղում մնա-  
ցող չեք,—ասեց Սաքոն մի քիչ նեղացած տռնով, հե-  
տո ելի շարունակեց. եղ չի պատճառը. ուղթւմ ես քա-  
ղաք կզամ, ուղթւմ ես...

— Չե, Սաքո, դու գլուղում պիտի մնաս, քո գործն  
ավելի մեծ ե, քան մերը:

— Հը, ծիծաղեց Սաքոն, յես գլուղում կմնամ,  
հասանք Մեծ Հային, կենտրոնն եր:

— Մի քիչ տխրեցի, համա բան չկա, դուզ ես ասում, հո չնեղացմար, հարդրեց Սաքոն:

Յես պատասխանեցի, վոր բոլորովին չեմ նեղացել, հետո հանգստացնելու համար ավելացրի, — դիմու Սաքոն, յես արդեն մոտիկ, շատ մոտիկ ընկեր ունեմ:

Ինքս ել չիմացա ճշմարիտ եյի ասում, թե ստում ելի, մենակ կապտավուն աչքերի համառ նայվածքն եր ինձ հետապնդում:

— Բան չեմ ասում, թող եղպես լինի, կիմի վոր ասեցի, ու սրտում բան չմնաց, առաջվանից ել լավ ընկեր կլինեմ քեղ.—ասեց Սաքոն ու վերադարձավ գյուղ:

Ինչու չդիտեմ, սկսեցի անհանգստանալ: Կիմա, մի փոփոխություն վաղուց յերկի իմ մեջ կար, իսկ այժմ սկսեց աճել ինձ հիշեցրեց Սաքոն. կամ հենց գարնան հետ կանաչող դաշտերը, բնությունն ամրող ու իմ արյունը լեռացող՝ յերակներիս մեջ: Հավանում եմ Հայկին, հարգում եմ կիմա, ու չեմ թագցնելու այդ:

Կոմսոմոլիստին հատուկ անհամբերությամբ քայլերս արագացրի:

Կիմա, նոր աշխարհի մարդիկ ենք, բայց չդիտենք, թե ինչպես են մեր զգացումներն արտահայտվելու ալր մի քիչ դժվար ե, կիմա չեմ կարող ասել:

## ՀԵՆԱ

ԵԵՆՔ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՍԵՐՈՒՆԴ ԵՆՔ

Եղ որն ամենին և անամքով ելի հագնվել. մաղերիս սանրվածքութիւն քիչ ավելի յերկար ելի զբաղվել, և զիտես ինչ. կիմա, առաջին անգամ հայելու մեջ տես-

աս, վոր բավական գեղեցիկ եմ: Յերեսս շրջեցի հայելուց ծիծաղեցի ինձ վրա, հետո ավելի համարձակ նայեցի հայելու մեջ: տպարանի աշխատանքի թողած դաշտությունը վաղուց և անցել այտերիցս, արեից ալրվել են այտերս ու բրոնզագույն դարձել:

Յեթե Հայկն այսպես համառ չաշխատեր, յերեի դեռ լես իմ գեղեցկությունը չնկատեցի:

Սովորականից ավելի արագ ներս մտա գավկոմ մաշինիստկա Սոնյան և բոլորն իրենց տեղերումն ելին: Ես անգամ կանգ չառա առաջին սենյակում ու հենց մտա քարտուղարի սենյակը: Ինչպես միշտ՝ զեկուցեցի աշխատանքներիս մասին, սակայն ավելի կարճ: Կոմսոմոլիստները գործով գալիս ելին դնում, լես գեռ կանգնած ելի:

Մի նոր, բոլորովին նոր հուզմունք տրոփում եր յերակներիս մեջ:

Միթե պետք ե յերկար ու բարակ մտածեյի, կամ սպասելի. յես շատ հասարակ ու պարզ եյի պատկերացնում այն. ել ինչն եր խանգարում ինձ, վոր ասելի Հայկին: Ինչու պիտի թագուն պահելի զգացմունքներս, վոր հետո ել ինձ համար տանջանքներ ստեղծվեր: Դա մի հեղափոխական գաղտնիք չեր, վոր հայտնելու ելի մի անվտանելի մարդու, բոլորովին վոչ. իմ բանակի մարդն եր, իմ աշխատանքի ընկերը:

Մինչև աշխատանքների վերջանալը, գավկոմում դես ու դեն եյի շրջում: Հայկը վեր կացավ պիտի գընալ, լես մոտեցա:

— Սպասիր, Հայկ, միասին գնանք, քեզ բան պիտի ասեմ, մի նոր բան,—ու գլուխս կախեցի:

Խոստովանվում եմ կիմա, ինչքանել վոր համարձակ

ես լինում աշխատանքների մեջ, զգացմունքի խնդրում  
մի քիչ այլ ե լինում:

— Բջիջների մասին,—հարցրեց Հայկը:

— Հենց ամեն որ ուզում ես նրանց մասին, չե ու-  
րիշ բան:

Բոլոր աշխատակիցները գնացել եյին, մենք յեր-  
կուսով ելինք մնացել. ծառան մաքրում եր առաջին  
սենյակը:

— Հայկ, քեզ սիրում եմ,—ասացի առանց ամա-  
չելու:

— Ինչու այդպես հանկարծ լենա,—հարցրեց Հայկը:

Առաջին խոսքն ասված եր, նրանից հետո ու-  
տասխանելը շատ հեղտ եր, կարծես աշխատանքներիս  
մասին լինելի զեկուցելիս:

— Յերբ շատ—շատ սկսեցի հարգել, յես ինձ իրա-  
վունք համարեցի անկեղծորեն հայտնել:

— Ուզում ես, վոր ընտանիք կտղմենք,—հարց-  
րեց նա:

— Ամուսնություն, ելի,—պատասխանեցի յես:

— Դե ուրեմն ընտանիք—ասեց Հայկը:

— Յերկուսս ել հավասար մարդիկ ենք, ինքնու-  
րույն աշխատող, մեր ընտանիքը կլինի նոր ընտանիք,  
—ասեցի յես վոգեորդված:

Գիտեմ լենա, կենցաղալին հարցերում մի քիչ յես  
ծածկամիտ եմ:

— Դրա համար ելիր լոռւմ, յերբ մենք խոսում ելինք  
այդ հարցերի շուրջը:

— Ամեն միտք չի կարելի հրապարակորեն հայտա-  
րարել. յես ավելի նոր կենցաղալին եմ, զեռ մի քիչ  
ել դենն եմ անցնում, դրա համար լոռում ելի:

Ալստեղ ել շատ սակավախոս եր նա. մտածեցի,  
«աշխատանքը ժամանակ չի տալիս նրան լերկար մտա-  
ծելու այդ հարցերի շուրջը»:

Նա թեթև ժպտաց, — բայց լավ աղջիկ ես Լենա, ու-  
րիմն այդպես. — ասեց նա ու շտապ վեր կացավ: Հա-  
մամիտ ե, յինթադրեցի յիս: Նա գնաց կուսդավկոմի  
նիստին, լես ել տուն գնացի:

Վոչինչ, վոչինչ չեմ ուզում թագնել քեզանից, իմ  
սիրելի կիմա, այն ինչ վոր յերեկ պատահեց, ուզում  
եմ քեզ մտերմորեն պատմել:

Յերեկոյան սենյակումս մենակ յես կարդում եմի:  
Սուրենը յեկավ ինձ մոտ. գիրքս մի կողմ շպրտեց, թե  
բավական ե խորասուզվես մի քիչ խոսենք: Յես նրան  
հանդիմանեցի իր կոպտության համար, բայց նա կա-  
տակի վեր ածեց, յես մեղմացա:

— Լենա, դու հասկանում ես, մենք նոր աշխարհի  
մարդիկ ենք, և ուրախությունը մերն ե. հեղափոխու-  
թյուն ենք վալելում, դա հասարակ բան չե:

— Հենց վոգեռվում ես, և ուրախության մասին  
ես ճառում, իսկ կարողանում ենք լավ աշխատել, — ա-  
սեցի յես:

— Աշխատանքն իր հերթին, բայց վոր մենք ավելի  
ուրախ պիտի լինենք, այդ եմ արձանագրում, մանա-  
վանդ դու, վոր հաճախ լուրջ ես լինում, հենց քեզ  
համար եմ ասում, — պատասխանեց Սուրենը ծիծա-  
ղելով:

Յես ուրախությունն աշխատանքի մեջ եմ գտնում  
— պատասխանեցի կարճ:

— Հա հա հա, — ծիծաղեց նա:

— Յես գիտեմ դու սերն ել աշխատանքի մեջ եւ  
դանում։

Գլխարկը ծուռ դրած՝ ձեռքերը դրպանում հետ-հետ  
գնաց նաւ։

— Որինակ մաշինիստկա Սոնլային սիրել աշխա-  
տանքի մեջ, մատները մեքենալի վրա թռչկոտացնելիս,  
դե արի ու հասկացի։ Յես հասկանում եմ աշխա-  
տանքն աշխատանք, սերն ել սեր, բայց նորագույն  
իմաստով, ինչպես ասում ենք նոր կենցաղի բովան-  
դակությամբ։

Յերկի յերկար խոսեր, յեթե նրան չընդհատելի։

— Յես սիրում եմ աշխատանքի ընթացքում աշ-  
խատող ընկերոջս, վորի միտքն ու մկանները սոցիա-  
լիզմի համար են գործում։

— Դե, ով բան ասեց, դրանք հասարակ բաներ են,  
ինչպես կոմմունիզմի ալբուրենը—դու ուրիշ բան ա-  
սա, վոր ելի նոր լինի ու կենցաղը մի անդամից հե-  
ղաշրջի։—ասեց նա ծիծաղելով, հը՞ խելքի մոտիկ չմըր,  
հարցրեց նա ու նորից ավելացրեց։

— Սիրելի բանվորուհի, կենցաղային հարցերը բարդ  
են և այժմ, յերբ նա չի ձեակերպվել վերջնականացես։  
ով ինչպես մտածում ե, կամ ինչպես սիրում ե, թող  
այնպես սիրի, միթե՛ դրանից հեղափոխությունը կը  
տուժի։

— Հենց այդ ե, վոր դու չես հասկանում, զայրա-  
ցա յես, հեղափոխությունը կտուժի... յերկի շատ յեր-  
կար եր մեր վեճը, յեթե չգար Հայկը, միանդամայն  
անսպասելի, նա մենակ եր։ Գլխարկը հաճախ հանում  
եր ու նորից ծածկում և ամեն անգամ թվում եր, թե  
նա գնալու յե. նա խառնում եր թղթերս, յես լուս

ելի, Սուրենը լերդում եր մի կոմսոմոլիստական մոռտիվ:

— Հետաքրքիր և Հայկի կարծիքը նոր սիրո մասին,—ասեց Սուրենը:

— Յես ժամանակ չունեմ,—պատասխանեց Հայկը կտրուկ:

Սուրենը կողքից հը՝ արեց ու շուռ յեկավ,—վորովհետեւ ներսդ են չի, վոր պիտի լիներ, հը...

Հետաքրքիր եր, յեթե Հայկը խոսեր, բայց նա միշտ խուսափում եր այդ հարցերից ու տեսակետ հայտնելոց, իսկ Սուրենի ակնարկները յես միմիայն բամբասանք ելի՛ համարում Հայկի վերաբերյալ:

Հայկը հանկարծ դարձավ Սուրենին.

— Դիտես բարեկամ, դու քո աշխատանքը վոչ թե զեկավարում ես, այլ քեզ զեկավարում են. Թեզիսներդ մաշինիստկան իր ուղածի պես տպագրում են եսոր թերթում ելի՛—և մի խոշոր սխալ գտա—«կոմսոմոլի» բջիջը զեկավարում ե գյուղի խորհուրդը՝ դաքաղաքականության մի խոշոր սխալ ե:

— Դա թէուրիմացություն ե, նա չի կարողացել, գրածը լավ կարդալ. բացականչեց Սուրենը:

— Փաստն այն ե, վոր այդպիս պիտի ուղարկվեր բջիջներին ու ահագին թէուրիմացություններ առաջ գար, իսկ դրա համար դու պետք ե ուշադիր լինես ու հետեւս տպագրությանը:

Ա՛հ, այդ մաշինիստկան, յես նրան ցույց կտամ, զայրացավ Սուրենը:

Իզուր ես վրդովվում, մաշինիստկան մեղավոր չե—նա կարող ե սխալ հասկանալ, դու շատ ուշադիր պիտի լինես, բավական ե մի փոքր սխալ զեկավարու-

թւուն և գործը տուժում եւ Հետո խմբակներդ կարդին չես ղեկավարում, արդեն կես տարի յե անցել ծրագրի չնշին տոկոսն են անցել,—աշխատում ես, կարգին աշխատի, իմ ու քո քեֆը չե...

Լավ քեզ ել գիտենք,—նեղացավ Սուրենը,—կարծես հաշվետու զեկուցում տվի, սկսել ե գլխիս մեղադրանք կարդալ:

— Ամեն վայրկան իրավունք եմ համարում ինձ աշխատանքը քննադատել, բոլորի համար վերջնականապես յես եմ պատասխանատու:

— Պատասխանատու յես, պոժալուստա, քեզ ել գիտենք, ասում եր Սուրենը քթի տակ:

— Ճիշտ ե ասում Հայկը, հաստատեցի յես:

— Հերիք ե, ապա մի ձեր աշխատանքի բացերը հետո կտեսնենք:

— Թոնը՝ աշխատանքի բաց չե, այլ խոշոր անփութութլուն, անգործնեյութլուն, թեկուզ աչքիս լուսը լինի, լերը աշխատանքին մատների արանքով ե նայում, համարում եմ սօցիալիզմի թենամի:

— Հա հա—ծիծաղեց Սուրենը, յերեկի կենարունից քեզ հուզ են տվել, խստագույն ես դարձել:

— Յեթե այդպես ես կարծում, վատ չե,—ասեց Հայկը:

Հայկն աչքումս հասակ եր առնում. համառ ձայնն ու հայացքն ավելի յեր խստանում.—յես նայում եմ նրա կապտավուն աչքերին, վոր ալժմ վառվում ել կարմրագույն կրակով, յերեկի ալդ նրա հուզմունքից եր—յես սիրում եյի աշխատանքի ալդ խիստ ղեկավարին:

— Յերկար ժամանակ մեղանից և վոչ մեկը չեր

խոսում։ Սուրենը ձեռքերը գըլանում, կանգնել եր լուսամուտի առաջ, իսկ Հայկը խառնում եր իմ թըղթերը։ հետո շախմատը բացեց ու սկսեցինք լուռ խաղալ. քարերը համառում ելին, մենք լուռ պայքարում եյինք։

Սուրենը գնաց։

Ելի շախմատում տարվեցի ու ջղայնացած պառկեցի անկողնուս վրա. Բոլորովին անսպասելի, Հայկը շատ մոտիկ նստեց կողքիս, յես հետ քաշվեցի, նա ժպտաց. այդ ժամանակություն չեր ունեցել, ինչ այս աշխատանքի մեջ, կամ բարկացած բովեներին։ Յես նայում եյի նրան. այն համառությունն աչքերից չքացել եր և իշխում եր մի ուրիշ համառություն։ «Նրան ասել եմ, վոր սիրում եմ, ուրեմն ինքն ել...» մտածում ելի յես։

— Զե՞ս հասկանում,—ասեց Հայկն ու ավելի սեղմվեց ինձ,—ամուսնությունը կատարվում ե շատ հասարակ. դու գիտես Լենա, վոր մենք հեղափոխության սերունդ ենք,—կապտավուն աչքերը, այժմ վառվում եյին կարմրագույն կրակով։

«Հեղափոխության սերունդ ենք» այդ այնպես հրամայող ու ազնիվ հնչեց՝ յես համարձակ եյի և թուլլ հենց այդ բովելին։

— Մենք ամուսնանում ենք, հարցըի յես շնչալով։

Նա ելի ժպտաց... վորչափ հավատում ելի նրա աշխատանքին, նույնչափ հավատում ելի նրա զգացմունքներին։

Այն շատ հասարակ պատահեց, աշխատանքի ընկերոջս հետ. այդ գիշեր մենք միասին եյինք...

Առավոտը վաղ, նա իմ սենյակից գնաց, իսկ և ես  
դրուդ մեկնեցի: Ճանապարհին շատ մտազրադ ելի,  
ալլիս չելի մտածում գլուղի բջիջների մասին, ալդ  
սովորական, եր դարձել—անսովորն այն եր... ինչ վոր  
պատահեց յերեկ գիշեր:

Մինչ ալդ յես չգիտեյի Հալկի կենսազրությունը,  
իսկ գիշերը յես իմացա. ալդպես պատահում ե մտեր-  
մության մոմենտներում, կամ ինքն ե պատմում, կամ  
դու յես հարցնում:

Կոշկակարի տղա յե, ապրելիս են յեղել շատ աղ-  
քատ. գիմնադիալից դուրս են արել դիրեկտորին չեն-  
թարկվելու համար: Մայրը մեռել ե, նա միշտ թափա-  
ռելիս ե յեղել: Մտել ե դերձակի արհեստանոց—վար-  
պետը դուրս ե արել. յերբեմն փողոցներում ծխախոտ  
ե վաճառել:

Միմրայն հեղափոխության շնորհիվ ե, վոր նա  
առաջ ե յեկել—սկզբում յեղել ե հասարակ զրադիր,  
հետո շնորհիվ իր ակտիվության և ընդունակություն-  
ների՝ կոմսոմոլն առաջ ե քաշել, դարձել ե բջիջի քար-  
տուղար, այժմ գավկոմի քարտուղար ե:

Նա չի սիրում իր կենսազրությունը պատմել, ալդ-  
քանն ել հարցնելով իմացա:

Գյուղը յերեաց: Նորից պիտի հանդիպեյի իմ բա-  
րեկամներին: Աշխատանքը ժամանակ չի տալիս յեր-  
կար մտածել, մտքիցս չքացավ Հալին ու նրա պատ-  
մությունը:

Շարունակությունը մյուս անգամ:

Քո լեն Ա.

## ԿԵՆՑԱԴԸ ՇՈՌԴՆԵՐ

Սաքոն քալում եր իմ կողքից ու առաջվա պես  
ընկերաբար հարց ու փորձ ելինք անում իրաբ:

— Գիտե՞ս, ընկեր Լևա, կոմսոմոլիստկա Նազիկը  
գրադիտություն ե սովորում, կամաց կամաց առաջ ե  
զալիս, խելոք ե, --ասում եր վոգեվորված:

Յես ծիծաղում ելիս Նա ասեց.

— Բնկեր Լենա, ուրիշ բան չկարծես, իմ ընկերն ա,  
կոմսոմոլիստ:

Կիմա, ես ել պիտի իմանաս՝ կան և այնպիսի կոմ-  
սոմոլիստներ, վորոնք մի քիչ խանգարում են աշխա-  
տանքները, Այս քանի որերում քննեցինք մի կոմսո-  
մոլիստի գործ: Միշտ խուսափում եր ինձանից, իսկ  
իր գյուղի ընկերների հետ մեծ մեծ խոսում ու բոլո-  
րին կոպտում. Նա գլխարկն աչքերի վրա լեր իջեցնուի  
և այդպիս եր ման գալիս, մարդ դժվարանում եր նը-  
րան ճանաչել, Ծնողները միջակ անտեսություն ու-  
նեն, գանգատվել են բջիջին, վոր տղան անտեսության  
մեջ չի աշխատում, հենց պարապ ման ե գալիս ու շա-  
հագործում կոմսոմոլի անունը: Նրան նկատողություն  
արեցինք և ամեն կերպ աշխատում ենք դաստիարակել:  
Յես նրա հետ խոսեցի, նա տարորինակ տեսակետներ  
եր հայտնում:

Ասում եր. «Յես չեմ ուզում կուլակ դառնալ, սե-  
փականություն չեմ ուզում»: Յես բավական յերկար  
խոսեցի, առաջարկեցի ձեռնարկել կոլեկտիվ անտեսու-  
թյան, Սաքոն որինակով: Ալդտեղ նա կապվեց. չեր  
խոսում: Աչքերը զցել եր գետնին, բայց համառու-  
թյունից քրտնել եր:

Ընկերներն ասում են, վոր կոտրվել եւ ու հիմա  
սկսել եւ տնտեսության մեջ աշխատել:

Ելի կոմսոմոլի կենցաղը ծռողներից՝ մի ուրիշի մա-  
սին: Կոմսոմոլիստն ամուսնացել եւ կուլակի աղջկա  
հետ ու տնփեսա դառել, կուլակի աղղեցության տակ  
եւ ընկել, տանից դուրս չի դալիս: Բջիջը մի քանի  
անգամ նկատողություն արեց: Նա ասում է.

—Աղջկան սիրում եմ չեմ կարող բաժանվել:

Կուլակը պալման եւ զրել, յեթե խառնվի կոմսոմո-  
լի գործերին, աղջիկը հետ կվերցնի, իրեն ել տանից  
դուրս կքշի: Ընկերները շատ նախատեցին, մի գիշեր  
կուլակի տնից փախավ. կուլակը դանդատ եր բա-  
ցել, տղան ուրիշ գլուղում եր: Մի ուրիշ կոմսոմոլիստի՝  
բջիջը դուրս արեց—նա անասելի բռնություն եր գոր-  
ծադրել, կրոնամոլության համար մորը ծեծել եր:

Ել վճրտեղ հիշեմ իմ պատմությունը, յերբ եսքան  
ուրիշ պատմություններ են բացվում աշխատանքի  
բնագավառում:

Լ Ե Ն Ա

### ՄԻ ԹԵԹԵՎ ՔԵՖ ՍԱՐՔԵՑԻՆ

Ճանապարհները կանաչել են. հիմի ավելի շուտ-շուտ  
հմ գլուղերը գնում: Սաքոյի կոլեկտիվը գարնանացանն  
սկսել ե. Սաքոն ինքն ելհո յեռում ե: Յերեկ կոլեկտիվի  
տղերանց հետ դաշտումն ելինք. մի տեսնես Սաքոն ու  
բոլորն ինչ հույսեր են կապում այդ տնտեսության  
հետ: Ինձ համարում են կոլեկտիվի անդամ ու յես իմ  
հերթին ջանքեր եմ թափում մեքենաներ ձեռք բե-  
րելու:

Աշխատանքից հետո գնացինք Սաքոլենց տուն ու  
չթողին վերադառնում կենտրոն։ Մի թեթև քեզ սար-  
քեցին, յես իսկի գլուխ չելի ընկնում։ Բոլորը ծիծա-  
ղեցին, յերբ Նազիկը յեկավ։ Սաքոն ասեց.

—Նազիկին ել չեմ թողնի վոր գնա իրենց տուն։

Նոր գլխի ընկա։ Բոլորս ուրախ ելինք Գիտես Կի-  
մա, Նազիկը բոլորովին ամաչկոտ չեր, սկսեց խոսել,  
ծիծաղել նույնիսկ կատակներ եր անում։

Յես հարցրի, —այդպես հե՞շտ հաջողվեց ձեր ամուս-  
նությունը։

Նազիկը պատճեց մի քանի խոսքով, վոր մենակ մի  
տատ ունի, նա ել ի՞նչ պիտի ասեր —ասում ե՝ ընկերա-  
նում եմ Սաքոլին, յես ել կոլեկտիվին ոգտակար  
կլինեմ։ Սաքոն բոլորիս ներկալությամբ համբուրեց  
Նազիկին, մենք ծափահարեցինք։

Դինի խմեցինք, աշխուժացանք ու սկսեցինք պա-  
րել, յերգել։ Սաքոն լեզվանի դարձավ ու մեզ հերթ  
չեր տալիս։

—Ընկեր Լենա, յես չելի իմանում, Նազիկն ել խկը  
քո կտորն ա, իսկը աշխատանքի ընկեր ա։

—Լավ, լավ, բղավեց Նազիկը։ Մյուսները ծիծաղե-  
ցին։

Մինչեւ ուշ գիշեր խոսում ելինք, յերգում, ծիծա-  
ղում, Նազիկը մի բոպե չնստեց, ամաններն եր մա-  
քրում, հաց ավելացնում։ Չատ սիրեցի, սրտաբաց աղջիկ  
ե։ Սաքոն վոգեկորվել եր ու յերկարացնելով պատմում  
եր կոլեկտիվի ծրագիրները։ մենք ներողամիտ ելինք  
դեպի նա։ Նազիկը մի քանի անգամ ձեռքը դրեց Սա-  
քոլի բերանին, —ուրիշին ել հերթ տուր, Սաքոն Մենք  
ծիծաղում ելինք։

Ամենից շատ գինին ներգործել եր Սաքուին. յերեսի պես խռովում եր ու քաշվում մի անկուն. յերբ մոռենում ելինք՝ զալրանում եր

— Դուք չեք թողնում, վոր յես իմ ծրագիրները բացատրեմ, մենք իշխանություն ենք խորհրդային բանվորագլուղական. Որինակ՝ յես. Հակոբը, Նազիկըն ու մյուսներն եղ իշխանության թաղա սերունդն ենք, Նայում եր ինձ, — հ'ը, ընկեր Լինա շծիծաղես, մենք ել գաղափար ունենք ու հասկանում ենք, թէ վհրտեղից ենք սկսել, ո՞ւր ենք գնում. ինարկե դեպի կոմունիզմ:

Իրեն իրեն հաշտվեց, նստեց սեղանի մոտ. Նազիկն ել նստեց նրա կողքին. ծափահարեցինք:

Այդ զիշեր Սաքուենց տանը քննեցի, առավոտն ինձ ճանապարհ գցեցին Սաքոն ու Նազիկը:

Ցւս ուրախ եյի, շատ ուրախ:

Գիտես, Կիմա նոր կենցաղ կառուցվում ե դլուզում. յես տեսնում եմ այդ մոտիկից, շատ մոտիկից:  
Լեն, Ա

### ԱՅՆՊԵՍ ՀԱՄԱՐՁԱԿ ԵՐ ՆԱՅՈՒՄ

Կիմա, գրում ես թե թնջպես են մեր փոխհարաբերությունները Հայկի հետ. Հանդիպում եմ Հայկին, առաջվա պես ընկերական ե ու լուրջ. կարծես մեր մեջ վոչինչ չի կատարվել ու յերբեք, յերբեք չի յերեվում մեր ավելի մոտիկությունը. կարծես վաղուց այդպես եր. Յերբ գնում եմ գեկուցելու, ելի ասում ե. — ուրեմն այդպես, ընկեր Լինա, — և ձեռքը ծանրությամբ դնում ե սեղանին, ապա ելի զբաղվում իր գործով:

Նրա սովորությունն ե, նա այդպես ե սիրում: Մե-  
նակ, խոստովանում եմ, կիմա, յես նրա հետ հասարակ  
եմ, պարզ. և արտահայտում եմ սերս ու ասում եմ, —  
գնա հանդսացիք, յերբ շատ ե աշխատում և հոգնած  
և լինում:

Յեթե չենք հանդիպում յերկար ժամանակ, կամ  
հանդիպում ենք, բայց ժամանակ չի լինում մտերմո-  
րեն խոսելու, դրանից մենք չենք վրդովվում. դրա  
համար վոչ նրա աշխատանքն ե տուժում, վոչ ել իմը:  
Այդ այդպես ե լինում աշխատող ընկերների հետ:

Մի որ ելի այն որվա պես անցավ: Գյուղից նոր  
ելի վերադարձել, պառկել ելի անկողնուս վրա. առանց  
ծեծելու ներս մտավ Հայկը:

Սափրված եր ու վրայի կապույտ սատինե բլուզն  
արդուկված. ալդ Փոնի վրա աչքերն ավելի մուգ-կա-  
պույտ փայլ ելին ստացել:

—Բարել, կենա:

—Բարել, բացականչեցի յես ուրախացած:

Նա մի քանի անգամ գնաց յեկավ սենյակումս.  
մի քանի գիրք վերցրեց, նորից տեղը դրեց. մոտեցավ  
մահճակալիս ու ելի հետ գնաց. նորից յեկավ նստեց  
կողքիս. —ուրմիս ես չե՞, —հարցրեց:

—Ուրախ եմ պատասխանեցի, անշարժ նայելով  
նրան:

Զեռքը դրեց ծնկիս վրա ու ելի անսովոր ժպտաց,  
կարծես վաղուցվա ամուսիններ եյխնք. այնպես համար-  
ձակ եր նայում աչքերիս մեջ:

—Հայկ, դու վոր ասում ես «հեղափոխության  
սերունդ ենք», հասկանում եմ իր նշանակությամբ.  
ինչպես հեղափոխությունն ու աշխատանքն եմ սիրում,

այնպես ել քեզ եմ սիրում, վորովհետեւ դու նրա կատարողներից մեկն ես: Իսկ դու ինձ հետ պարզ չես...

— Շատ պարզ, վոչ մի ճնշում, վոչ մի բռնություն ու պալման. յեթե, Լենա, դու չես ցանկանում, հենց ալժմ կգնամ.— գլխարկը ծածկեց:

Ցես գլխարկը վերցրի, — միքիչ խոսիր:

— Սիրաբանության մասին: Եհ, չարժե, յես դրանք համարում եմ հին պատմություններ, մենք հեղափոխության սերունդ ենք:

— Իսկ պարզությունը, միթե վատ ե, — հարցրի լես:

— Դե իհարկե վատ ե ու հիասթափեցնող, նոր մարդիկ ավելի բարդ են, միթե չգիտես դու այդ հասարակ ալբուրենը:

— Ցես այդ չեմ հասկանում, — պատասխանեցի լես:

— Դե վորովհետեւ ինքդ ալդպես չես:

Նա պառկեց կողքիս:

Ցես շոյում ելի նրա ճակատը, նա գլուխը թեքել եր կրծքիս վրա ու չեր խոսում:

— Դու հետաքրքիր աղջիկ ես, Լենա, նոր եմ նկատում քո գրավչությունը — շնչաց նա արագացող շընչառությամբ:

Ցես սիրում եյի աշխատանքի նվիրված մի ընկերոջ, ել ավելին լինչ եր հարկավոր:

Նա հպեց ինձ, համբուրեց ու լես չդիմաղրեցի:

ԼԵՆԱ

## Պատքարով և ՀԱՂԹԱՀԱՐՎՈՒՄ ՀԻՆՉ

Կիմա, դու ինձ վիրավորում ես. միթե Հայկը պառահական մարդ ե, վորին լես խոստովանել եմ իմ զգացմունքները. դա մերոնցից ե, սոցիալիզմի մարդկանցից։ Մենք մի սենյակում չենք ապրում, վորովնետե դեռ անհրաժեշտ չե, բայց միթե դա անբարոյականություն ե, ասա ուրիշ ժամ գիրկն եմ ընկել։ Դու նամակը շատ խիստ եք Կիմա, շատ խիստ. այդքան շուտ չափեցիր իմ բարուականությունը։

Յես քեզ անկեղծորեն գրում եմ այն, ինչ վոր կառարվում ե, իմ ուղեղից չեմ հնարում։ Զարմանալի հասկացողություններ ունես.—ազատամիտ լինելը վատքան ե, միոր դու հարվածում ես ալդ իմ հատկությունը։ Դու սխալվում ես, լես ինձ իշխում եմ. վոչինչ վատքան չեմ արել յերբ նրան սիրել եմ. դրանսվ չի տուժել վոչ իմ պատիվը, վոչ հեղափոխությունը։ Իսկ դու դրում ես «հենց իսկուն», ապա ինչ ելի՛ ուզում միջնադարյան սեր սարքելի՞նք...

Բոլոր կոմսոմոլիստները սիրում են նրան, յես ել նրանց հետ, մենակ ավելի մոտ, վորպես տղամարդ ել սիրում եմ։

Դու ինձ տպարանից ճանաչում ես, վոր լես սովորություն չունեմ յերկար տիսրել, մտատանջվել. յեթե քո ասածով պատահի, վոր նա ընկերավարությունից անցնի ու ինձ վրա նայի միմիայն վորպես կնոջ, ճանապարհները լայն են, լես կապվողը չեմ։ Մայրս մեռավ շատ շուտ մոռացաւ։ Յեկ միայն մի անգամ կլանքումս սիրեցի շատ ուժեղ, մենք միասին եյինք, դու հիշմում

ես, յերբ հեղափոխության ամենամեծ դնեկավարը, ընկեր Լենինը մեռավլ - միայն այն ժամանակ շատ տխրեցի:

Թանի որ եր Հայկը հիվանդ եր, իս նրան խնամում ելի. նա շատ գոհ եր ու զնորհակալ. առում եր—Լենին, յերբեք չեմ մռանա քո խնամքը, իսկական բնիեր ես.

Ել ավելին ի՞նչ ասեր. ուրեմն մենք լավ ընկերներ ենք: Վոչ կասկածել եմ, զոչ տատանվել, հավանում եյի, ողբազ. ապա ի՞նչեւ Սուրենին չսիրեցի, դե զորովնեռև զործի մեջ հնավանեցի: Հայկը կարելի լի շատ բան սովորել իսկ ինձ այլք անհրաժեշտ ե, չես ենքան կրթություն չունեմ: Հայկը մենակ զործի մարդ չե, որքի մարդ ել ե, շատ և կարդում, առում ե—զործն առանց կարդալու և զիտության կիսատ եւ Խոստովանվում եմ, զոր դեռ Հայկի լավ կողմնըն եմ տեսնում, ինձ հաճար նրա պակասությունն այն ե, զոր պարզ չի, ինչպես լիս և դու ելինք, կամ մեր տպարանի ընկերներն եյին: Այդ ել յերեի նրանից ե, զոր աշխատանքի մեծ ունակություն ունի և զիտություն:

Հարցնում ես Սուրենի մասին. նա առաջվա պես հաճախի չի այցելում ինձ. կարծես ի՞նչ վոր փոփոխություն ե կատարվել, ավելի քիչ ե խոսում ինձ հետ:

Սիրաբանություն ե սկսել Սոնյայի հետ. այնքան ե գովել խեղճ աղջկանը, զոր ուրախությունից քիչ ե մնում խելքը թոցնի, բայց խելքս բան չի կտրում նրա սիրաբանությունից:

Կիմա, դու հեշտ մի կարծի, կենցաղը բավական դժվար ե կառուցվում, յերբեմն հինն ու նորը խաչաձեվվում են իրար հետ. հին ու նոր զգացմունքները բաղխում են կատաղի կերպով, ու պայքարով ե հաղթահարվում հինը:

Չեմ պարծենում, կիմա, բայց սկսում եմ տվելի  
լավ ճանաչել այն մարդկանց, վորոնց հետ աշխատում  
եմ կամ հանդիպում:

Վորովինեան դու ինձ մեղաղըում ես քո նամակում  
և ենքան ել լավ չես ճանաչում, որա համար դեռ պի-  
տի գրեմ:

Աւղեկիցս եր կուս հրահանգիչ, ինձ պես զավառի  
աշխատող! Յերկուսով ձիեր ունեցինք, վերադառնում  
ելինք կենարոն. յես ասում եյի—քշենք ձիերը, տես-  
նենք ո՞վ առաջ կընկնի: Եդ հրահանգիչը միշտ ձին հետ  
եր պահում. յես ել ձիս կանգնեցնում եյի, մինչև նա  
հավասարվում եր ու սկսում եր խոսել, մեծ բերանն  
ու փայլվող աչքերը հառելով ինձ վրա: Ճիշտն ասած՝  
գուրս չեր զալիս:

— Են աշխատանք, աշխատանք. աչք չենք բացում  
և անհատական կլանք չունենք: Գարուն ե, յերբ բը-  
նությունը ծաղկել է սոցիալիզմի պես, արի աղջիկ ըն-  
կերոջ հետ ճանապարհ գնա ու գինչ, — ասում եր նա  
ու հին կաշվե պենջակը հետ զցում, կամ ձեռքն ոձի-  
քին քսում:

— Ավելորդ բաներ ես խոսում, — և ձիուս մտքու-  
կում եյի: Ելի հավասարվում եր ինձ. ձիերը գնում ելին  
կողք-կողքի. դուրս չեր զալիս այդ հրահանգիչը, խո-  
սում եր վորպես թե նոր կենցաղից, և այլանդակ քա-  
ներ եր ասում: Յես պատասխանում եյի.

— Ընկեր, քո գլխումը կինցաղալին շփոթություն  
եւ նա ծիծաղում եր՝ բերանք մեծ բացելով:

— Ընկեր կոմսոմոլիստկա, դու հլամ խամ ես, բայց  
լավ աղջիկ ես, տղամարդի պես աշխատող աղջիկ ես,  
ես ա վոր քեփս բերում ես:

— Դովասանք հարկավոր չե, — ասում ելի յես ու  
ձիռւս մտրակում:

Շատ մոտիկ անցնում ելինք մի գյուղի մոտով-  
նա մտրակը պարզեց դեպի ցածրիկ տները.

— Այ, իմ ընտանիքը, յերեխաներս, կինս այդտեղ  
են ապրում, համա ով ա գնում նրանց մոտ, — գործի-  
մարդ եմ, ժամանակ չունեմ կնկանս ու յերեխանց-  
տեսնելու. մեր կուսակցական գործն այդպես ա մեզ  
պարտադրել:

— Մի՞շտ ես այդպես վարվում, — հարցրի յես:

— Միշտ, — պարծեցավ նա, — ո՞վ ա կնկա յերես նո-  
յում. թե վոր գյուղ եմ գնում, մենակ մորս ու յերե-  
խաներիս համար:

— Եղ ի՞նչ վերաբերմունք ե կնոջ հանդեպ — վրդով-  
վեցի յես:

— Եհ, կնիկ ա, ելի, են ել դեղի կնիկ. իրա համար  
ապրում ա, թհող ապրի, յես ի՞նչ գործ ունեմ:

Ելի ասեցի — գլխումդ շիռթություն ե, լավ չես  
հասկացել: Նա ծիծաղեց.

— Զոր զրուցից ոգուտ չկա, արի ես կանաչների-  
վրա քիչ հանգստանանք, — ասաց նա աչքերը փալա-  
տակելով:

Եես չհամաձայնեցի ու ձիս մտրակցի:

— Հա, հա, հա, — բարձր ծիծաղեց նա, — վախենում  
ես, ընկնը լենա, մի կուսակցական ընկերոջից. մի-  
մեջան որիորդի պես վարվեցիր, յենթաղրենք մի-  
անգամ համբուրելի; ի՞նչ պիտի լիներ...

— Յո գլխումը շփոթություն ե, դլուղի աշխատող ես, քեզ լուրջ պահի, դեռ կուսառմը իրավունք չի տալիս քեզ կենցաղն այլանդակելու, հասկանմամ ես:

— Վոչ, ընկեր Աբոս, դու սխալ հասկացար, յես առում եիի ընկերավարի կնսուենք, — ասում եր նա համողիչ ձայնով:

— Ինձ լերեխալիի տեղ մի դնի, ճանաչեցի քեզ — ասեցի ու կատաղորեն ձիս քշեցի:

## ԼԵՆԱ

### ՀՈՒԶՎԱԾ ԵՑԻՆ

Առավոտյան այն հրահանգչին հանդիպեցի կուսդավկոմի շենքում. բարենցի առանց ծիծաղելու, իսկ նա ծիծաղում եր:

— Մեր կոմսոմոլիստկան զատ հպարտ ե, հռմա վոշինչ, կդաստիրակենք — ասեց նա:

— Բայց վոչ քեզ պես կուսակցականը, — ասեցի ու մտա կոմսոմոլի զավկոմ:

— Ելի չխէչխկում եր գրամեքենան. բայց Սոնյայի քիթը կախ եր ու աչքերը կարմրած: Առաջվա պես բարենցի ուրախ, իսկ նա միայն գլխով արեց: Կարոն աչքը հպելով նայեց ինձ, կարծես ինչ վոր բան եր ուզում ասել: Մոտեցա Սահակի սեղանին, նա շտապ բան եր գրում, կիսանստած դիրքում:

— Շմտ ես զբաղված, — հարցըի:

— Հա, բարեւ ընկեր Աբոս, գիտես, համագումարի համար ենք նախապատրաստվում, հարկավոր ե կազմակերպութիւնն ճիշտ հաշվառում ե ալն, գիտես, ելի աշխատանքի պահանջները:

Գնացի քարտուղարի սենյակը. Նո վրդովված եր,  
իսկ Սուրենը սաստիկ կարմրած:

—Մի ամիս առաջ դու այդ թեղիսները պիտի զրած  
լինելիք, ու չկա, —ասում եր Հայկը: —Իսկ ուր ե խըմ-  
բակներիդ պատկերը, դու չես ղեկավարում, դու չես  
աշխատում, այսպես ալլես չի կարելի շարունակել:

Ինչ վոր հուզված ելին, Սուրենը ծնկները սովորա-  
կանից արագ եր շարժում:

—Ընկեր Լենա, դու այս վերջին ամիսներում ստա-  
ցել ես վորոշ ցուցմունքներ խրճիթ ընթերցարաննե-  
րում աշխատանք տանելու, —հարցրեց Հայկը:

Յես այլևս այս գալաքոռում չեմ աշխատի, ընկերա-  
կան մթնոլորտ չկա, —մինչ իմ պատասխանելը պա-  
տասխանեց Սուրենը:

—Պարտաճանաչ աշխատելով միայն կլինենք հա-  
մերաշխ ընկերներ, յերբ աշխատանքը տուժում է, յես  
չեմ կարող լրել Դու խնայել ես քեզ, թէ մտշինիստ-  
կա Սոնյալին, վոր թեղիսները ժամանակին տպա-  
գրվի:

—Թքել եմ նրա վրա, —ասեց Սուրենը տեղից կանգ-  
նելով:

Յես յերկար չկանգնեցի. յերբ դուրս եյի գալիս  
Սոնյան ինձ կանգնեցրեց:

—Ընկեր Լենա, մի րոպես Գիտեք յես բոլորովին  
մեղավոր չեմ, Սուրենն ինձ չի ավել նույթերը տպա-  
գրելու. Եսոր յեկավ բղավեց, թէ բոլոր ուշացումների  
պատճառը յես եմ: Ընկեր Լենա, յես չեմ կարող այդ  
վերաբերմունքը տանել. ամբողջ ժամանակ կատակում  
եր, հիմա ել այդպես փոխվեց: Նրա ձախը դողում  
եր, դուրս յեկանք միջանցքը նա սկսեց հեկեկար

— Սոնյա, մի քիչ ամուր կաց, աշխատանքի ընթացքում պատահում ե բոլորիս հետ, ջղայնանում ենք և իրար վիրավորում,— ասացի յես, վոր շատ անհարմար գրության մեջ ելի:

— Ախար, յեթե նա ինձ սիրում եր, ինչո՞ւ ըոլորի տուաջ խայտառակեց: Մեկ ել, չեմ իմանում, նա ինձ հետ ամուսնալո՞ւ լե թե...

— Դե յես վո՞րտեղից իմանամ, Սոնյա, դու յես մուերիմ լեզել, — պատասխանեցի յես տարակուսելով:

— Զեր կոմունիստներից ե, ձեր մոտեցումները դուք կիմանաք, յես ի՞նչ իմանամ, առաջ ինձ հետ շատ-շատ լավ եր, հիմա քանի դնում վերաբերմունքը փոխում եւ նոր նկատեցի, Սոնյան շատ եր նիմարել:

— Սոնյա, դու ինքդ նրա հետ խոսիր ու պարզիր, ասացի յես. ուրիշ բան չեցի կարող ասել բայց մտքումըս կատաղել ելի Սուրենի վրա, վորովհետեւ նա Սոնյային չեր հարգում, այլ... Սոնյայի նման ազիկների համար շատ դժվար ե, նա կհիասթափիլի ու կփչանա:

Սաստիկ զբաղված վիճելու պատճառով՝ քանի որ եր Հայկին չեցի հանդիպում, յես ել գյուղերից վոտս չեցի կտրում:

ԼԵՆԱ

## ՆՈՐ ԱԳԻՏՈՐՈՌԸ

Կոմսոմոլիք. համագումարը վերջացավ: Սուրենը գնաց. նոր ազիտպրոպ ե յեկել, վարդակույն այտերով մի աղջիկ—կոմսոմոլիստիա յե և կուսակցության թեկնածու: Յերբ մի նոր աշխատող ե գալիս գավառ,

մանավանդ կին աշխատող, սկզբում անպայման նրա  
մասին շատ են խոսում: Նոր ագիտալրոպի մասին տ-  
սում են՝ թոքախտավոր ե, շատ պատրաստված ե,  
հայրը դաշնակցական ե յեղել... և այդպես նրա մա-  
սին մի շարք կենսագրական մանրմանություններ,  
մենչև վոր սովորական կղառնա:

Առաջին որից շատ մտերիմ հայացքով նաև ինձ  
ու մեղմ ժպտաց, ինքը մոտեցավ հարցրեց իմ աշխա-  
տանքների մասին: Սիրտս կպավ, ընկերական աղջիկ  
ե ու ինքն ել սկսել ե յեռանդով աշխատել. Սոնցալի  
դուրն ել ե յեկել, ամենից առաջ նրա գրություններն  
ե տպագրում:

Հաճախ գնում եմ նորիկի մոտ, բարեում ե գնդուն  
ձայնով ու շատ քաղաքավարի վարվում. կամ զիրք ե  
կարդում, կամ զեկուցում գրում. ինձ մի քանի դիրք  
ե նվիրել ու հեղափոխական ալբոմներ: Շատ կարգա-  
ցած աղջիկ եւ Բայց զի՞տես, կիմա, շատ փափուկ  
սիրտ ունի, իսկույն հուզվում ե—նուրբ աղջիկ ե, ա-  
վելի նուրբ ե քան հարկավոր ե կոմունիստկաներին:

Յերեում ե նոր աշխատող ե, մարզված չե, մեր կոմ-  
սոմոլիստներն ել քիչ կոպիտ են, և նորիկը հաճախ  
հուզված ե լինում:

Հայկը գիտե վարվել, Հայկի հետ շատ ե մտերմա-  
ցել, այդ նրանից ե, վոր նրանց աշխատանքները շտա-  
են կապված:

Հայկն առաջներում գալիս եր, շախմատ եյինք խա-  
ղում, յերբեմն գիշերում եր ինձ մոտ. վերջերս չի գա-  
լիս կիմա, չեմ ուզում շտապել, ու վորոշ յեղրակա-  
ցություններ հանել. բայց փաստն այն ե, վոր նա

բնավորությամբ բարդ ե, ինձ ու քեզ պես չե, ինչ վոր  
ներսում կատարվում ե, դժվար ես իմանում:

Յես կարծում եմ հենց եղ բարդությունից մի քիչ  
վտանգ կա: Կիմա, կգրեմ, դու չանհանդստանառ:

Լ Ե Ն Ա.

## Ազատ եթի Շնօրիս ՅԵՎ ՀԱՍԱՐՁԱԿ ՔԱՑԼՈՒՄ

Կիմա, անհամըեր աղջիկ ես. մի տես ի՞նչ կլինի  
ու յես ի՞նչպես եմ վարվելու, հետո լեզրակացություն-  
ներ արա: Դու գրում ես, վոր յես միամիտ եմ, Հայկը  
սիրում ե Նորիկին. եհ, ինչ ես կարծում, Կիմա, յես  
Սոնկացի պես պիտի արատսվեմ. գործի մարդ չեմ լի-  
նի, յես յեթե այդպես ընկճվեմ

Թեպետ դու ինձ շատ ես հարվածում, բայց ավելի  
լավ ե յես քեզ պատմեմ, քան թե առաջուց պաշտպան-  
վեմ:

Շատ տպավորություններ ունեյի գյուղերից,  
քնացի Հայկի մոտ, վոր պատմեմ. տանը չեր. այդուն-  
կից վաղեցի Նորիկի մոտ. ուզում ելի դուռն առանց  
ծեծելու ներս մտնել, մեկ ել մտածեցի անքաղաքա-  
վարություն ե ու ծեծեցի:

Դուռը բավական ուշ բացվեց:

Նորիկի ալտերը սովորականից ավելի կարմրած  
ելին, ուրախ արտահայտությամբ ներս հրավիրեց ինձ:  
Հայկը նստած եր սեղանի առաջ.—հ'ը,—ասաց ու գիր-  
քը թերթեց: — Մենք կարդում ենքինք կենին. — ասեց  
Հայկը, աչքերը չհեռացնելով գըքի եջերից:

Նորիկը յերկու ձեռքերին հենվելով նստեց թախթի  
ծայրին և ծիծաղում եր մի տեսակ անհանդիսու:

ամբողջական կարմիր սատինե շոր եր հագել ու այդ  
սաղում եր նրա վարդագույն այտերին:

— Աենա, քանի գլուղ պատեցիր, ինչ կար բջիջնե-  
րում — հարցը Հայկը:

Անտեղի թվացին այդ բոպելին ալդ հարցերը, ինչ  
վոր պատմելու ելի, վորոշեցի չպատմել: Անհարազատ  
մի բան զգացի, ներսա ինչ վոր բողոքում եր: Եկմա,  
յեթե նորիկն այնպես չժպատար ու Հայկն ել գիրքն  
շատապ չթերթիր, գուցե ինձ հետ այդ չպատահեր: Յես  
չեմ սիրում ծածկված բարդություններ, յես խուսա-  
փում եմ տանջող զրություններից, իսկ ինձ համար  
կարծես ստեղծվում ելին: Մի քանի բոպե բոլորս լուս  
ելինք:

— Հայկ, ինչո՞ւ չես խոսում, հարցը յես:

— Կարզում ելինք ու դրանից միտքս զրադված եւ:

— Դև ուրեմն նորից կարդացեք, յես խանդարեցի:

— պատասխանեցի յես և ուզում ելի գուրս գալ:

Նորիկն ինձ չեր թողնում գնալու, մեղմ ձայնով  
ու մի քիչ ել ոտար շեշտով համոզում եր, վոր չեմ  
խանդարում:

— Նստիր, Աենա, դու ել լսիր, մենակ տանն ինչ  
պիտի անես, — տսում եր նա:

— Ճես ել կարդալու գրքեր ունեմ, և բացի եղ, պի-  
տի հանգստանամ, վոր գլուղեր եմ գնալու, — ասացի  
յես:

— Նստիր, Աենա, — ասաց Հայկը, ապա դարձավ նո-  
րիկին:

— Վերջերս յես կարդացի Կելլերման-ի «Տունելլ»:  
Ինչքան լավ ե գրել, հուզիչ ե այնտեղը, յերբ բանվոր-  
ները քարկոծելով սպանում են Մողին՝ ինժեներ Ալ-

Նի կնոջը և 5 տարեկան Եղիտավին՝ նրա աղջկանը:  
— Յես կարդացել եմ ու արտասվել, — ասեց Նորիկը:

— Հեղինակն այնպես և նկարագրում, վոր ընթերցողը մի քիչ սկսում և հակազրել կատաղած բանվորությանը: Ալանն իր խոր վիշտը զսպում և ներսում, Ալանն ամուր մարդ ե... խոսում եր Հայկը:

— Իսկ վոր տունելում հարցուրավոր բանվորներ վաշընչացմն, իհարկե պետք և բանվորությունը կատաղեր, — շարունակեց Հայկը:

— Իսկ ինչո՞վ եյին մեղավոր Եղիտան ու Մողը... պատասխանեց Նորիկը:

Յես համարձակ դիտում ելի նրան, ինձ թվում եր, վոր ամենաթեթև վշտից Նորիկը փշովելու յիւ նրանք խոսում ելին դրի մասին, յես չեյի լսում — յես խորանում ելի իմ ճանաչողության մեջ: Յերբ դուրս յեկա, ավելի աղատ ելի շնչում և համարձակ ելի քալում:

## ՀԵՆԱ

### ՅԵՐԿՈՒ ԱՇԽԱՐԴԻՑ

Յես նիհարել եմ, այդ նկատում են իմ մոտիկ ընկերները, վոչ թե տիրությունից կամ աշխատանքից, այլ ուրիշ բանից, Կիմա, արդ դու պիտի իմանաս պատահում ե բոլոր կանանց հետ:

Մի շարաթից հետո գնացի Հայկի սենյակը, յես ուզում ելի նրան իմանալ ու պատասխանել:

Նրա մոտ ուրիշ կոմսոմոլիստներ կային. խոսում ելին գյուղատնտեսական արտելների մասին, ինքս եւ

սկսեցի մասնակցել ու նկարագրել Սաքոլի կողեկտիվը.  
այդ պատմելու ընթացքում հիշեցի Սաքոլի, Նաղմեկի  
պարզ սերը:

Հոգնած եյի, թիկն տվի Հայկի անկողնու վրա.  
Հայկը մեկ-մեկ նայում եր իմ կողմն ու խոսակցու-  
թունը շարունակում:

Յերբ ընկերները գնացին, նա մոտեցավ սեղանին  
ու ինչ վոր բան եր զրում:

— Ի՞նչ ես մտածում Հայկ, մեր հարաբերություն-  
ներն այսպես անորո՞շ են մեալու, վո՞րն ե մեր կենցաղը:

Նա գլուխը բարձրացրեց ու նայեց ինձ:

— Եես ժամանակի մարդ եմ և չեմ կարող ինձ կաշ-  
կանդել ամուսնական կենցաղով:

— Ի՞նչ, յես գործակցում եմ թե կաշկանդում. —  
ձեռքս խփեցի սեղանին ամուր, շատ ամուր. կատաղել  
եյի, իմ մեջ խոսում ելին իմ իրավունքներն ու հավա-  
սարությունը:

— Եես այլև չեմ սիրում, — ասեց նա ցածրաձայն:

— Իսկ առաջ սիրո՞ւմ ելիր, — հարցըի յես:

— Դու ինձ իրավունք տվիր քեզ սիրելու, իսկ յան...

— Այդ վնաս իրավունքներն են. հեգնմամ ես ինձ:

Կիմա, յես վիրավորված եյի. Եես վնարում ելի  
նրա մեջ նոր մարդուն, նոր զգացմունքները, իսկ այժմ  
նա կանդնած եր այնպես անորոշ:

— Անցման շրջանը բարդ ե, կենա, — ասում եր նա:

— Բարդ ե, զրոյինետև քեզպեսները լերկու աշխար-  
հի մարդիկ են — Ասեցի յես ու նստեցի:

— Ժամանակը հասկանալու համար հարկավոր է  
հարուստ հուլղեր ու մտածողություն ունենալ, — ասեց  
նա թիթե ժպտալով:

— Յես քեզ սիրեցի աշխատանքի մեջ, այժմ չեմ  
ուիրում աշխատանքից դուրս, յերբ փիլիսոփայում ես:  
— Դու չես հասկանում, լինա, դու այնպես ել միու-  
միտ ես մնացել:

— Քո ուղած հարսառությունները յես չունեմ, ճիշտ  
ե, հենց հիմա յես չեմ արտասվում, համարձակ սիրեցի,  
համարձակ ել կինուանամ:

Նա բռնեց իմ թեփը, — Լինա ընկերաբար հեռա-  
նանք:

— Ընկերաբար, — պատասխանեցի յես ու համարձակ  
նալեցի նրա աչքերի մեջ:

Նա ասեց, — մենք ներքուստ չհարմարվեցինք, դու-  
քերել ես քեզ հետ գործարանի մարդը, իսկ յես... նու  
սեղմեց ձեռքս:

Ասեցի մնաս բարով ու քայլերս ուղղեցի դեպի հի-  
վանդանոց:

Գիտես ի՞նչ ելի զգում, Կիմա, հիշմամ ես, յերբ  
տպարանում մեր շարվածքները հանկարծ քանդվում  
եյին՝ ինչպես եյինք վրդովվում, ճիշտ այդպես եյի  
զգում:

## ԼԵՆԱ

### ԴԵՌ ՔՍԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՄ

Սիրելի ընկերուհի Կիմա, քեզանից վոչինչ չեմ  
թագցնում, Դրում եմ հիվանդանոցից. յերրորդ որդի և  
պառկած եմ. մի շատ սովորական բան, վոր պատա-  
հում ե կանանց հետ, ինձ հետ ել պատահեց: Վիժում  
կատարեցի:

Յես չեմի հրաժարվի լերեխա ունենալուց, բայց դե  
գավառական միջավայրում անհարմար եր, լավ որինակ  
չեր լինի — դրա համար միտյն հրաժարվեցի լերեխա-  
վից:

Այսոր Հայկը յեկավ ինձ մոռ. Նա տխուր եր, լես  
նրան վոչինչ չհիշեցրի, ել չարժեց վերջացած հարցի  
մասին նորից խոսեր

Ինքը խոսեց, — գիտակցությամբ քեզ հավանում եմի,  
իսկ... նորից ինձ լենա:

Այնպես հանդարդ, այնպես անվրդով ելի նայում  
նրան: Նա հարցրեց Բնչ կարիք ունեմ, յես պատաս-  
խանեցի, վոր բոլոր կարիքներս հոգացված են: Միայն  
ինդրեցի, վոր գավկոմն ինձ տեղափոխեր ուրիշ շրջան:  
Նրա գնալուց հետո, ստացա քո նամակը:

Եիմա, լես զարմանում եմ, վոր դու այդպիսի խոր-  
հուրդներ ես տալիս. լիս ինչպես կարող եմ ստիպել  
նրան, կամ խայտառակելով, կամ ապտակելով — դու  
բռնություն ե, այն ել միամիտ բռնություն:

Դու նրանից ես վախենում, վոր լես կակսեմ մի որ  
սրա, մի որ նրա հետ սիրաբանել, լես մտադիր չեմ  
պոռնիկ դառնալ, կամքս ամուր ե:

Յես դեռ 20 տարեկան եմ, վորքան ժամանակ կա  
տշխառելու և առաջ գնալու:

Ինչմեւ պիտի թուրանամ, մեր կհասնի:

Ավելի լավ եմ ճանաչում կյանքն ու ավելի լես  
վորքորվում. ճիշտ ե առողջությունս վատթարացել ե,  
սակայն դա հասարակ քան ե, ելի կվերականգնեմ: Դու  
կտեսնես, կիմա, վոր յես չեմ ընկճվեր

Բարեկը տպարանի ընկերներիս:

Քո՞ Լեն Ա.

## ԱԼԵՎԱՀԱՅՐԴՈՒՄ

Բարեւ, կիմա. յերկար ընդհատումից հետո նորից եմ գրում բոլորովին թարմացած։ Ինչքան աշխատանքի մեջ ես լինում ու շատ ես շրջում, ենքան նլութ ես հավաքում, իսկ դու գիտես, վոր յես պատմել սիրում եմ։

Հիմի աշխատում եմ Ալլահվերդու շրջանում։

Կենտրոնս Ալլահվերդին ե, բնակվում եմ բանվարական ընտանիքներին կից։

Բանվորական միջավայրում ավելի քան աճեց իմ վորակութլունը, մոռացել եմ անցածն ու ամեն որ նոր մարդ եմ։

Տես ինչպես ե, վոր ուրախ եմ ու վոգեորված։

Առավոտը վաղ գուղոկը կանչում ե հանքերից. բանվորական ընտանիքները աղմկում են, արթնանում եմ ու շորերս արագ հազնում։

Իմ հարևաներն են նրանք — հանքափոք Սեղբակը, Բունյաթը (Թուրք բանվոր). ամեն տառվոտ բարի լույս ենք ասում իրար, նրանց յերեխաները խաղում են շեմքիս առաջ, վորովհետև խաղի համար հարմար ե առափարակ, նրանցից յես միշտ նվերներ եմ ստանաւ պղնձի փայլվլուն կաորներ — յեթե մտնես իմ սենյակը, լուսամուտիս գոգում ահազին հանքային հարստություն կա դիղված։

Յերեխաներն ինձ շատ են սիրում, վորովհետև նըրանց վրա իսկի չեմ բարկանում ու մեկ մեկ քաղցրացնում եմ բերանները։ Հենց վոր դուրս եմ գալիս, խաղը թողնում են ու սկսում հետո դրուցել, յես ել նրանց

հետ յերեխավարի լեմ լինում, շատ են ուրախանում:

Դիմացում բանող հիդրոկայանի աղմուկն իմ սեն-լակի մշտական յերաժշտությունն եւ Նրա ձայնն իշխում եր բոլոր ձայներին, լիս շատ անգամ չեմ կարո-դանում տարբերել յերեխաների ձայնը, այնքան և ա-կանջս վարժվել հիդրոկայանի լերգին:

Առավոտները մի բոպելից ավելի չեմ կարողանում տանը մնալ, բանվորների կանաչք կոռավերատիվի գըր-քուլկները ձեռքերին, գնում են կամ կտոր գնելու, կամ միս, աղ, Յերեխաները քաշ են գալիս նրանց հետեւից:

Յերբ բոլորն ելշտապում են դու չես կարող չշտապել— հավաքում եմ թղթերս ու գեղի զյուղ ճանապարհում:

Յերբեմն իրիկնապահերին հանքափոր Սեղբակն ու Բունլաթը նստում են իրենց շեմքին ու զրուցում, յերբ տանն եմ լինում, անպայման մասնակցում եմ նրանց զրուցին:

Սեղբակը յերիտասարդների ներկայությամբ վողե-վորվում ե, մահավանդ, վոր ուշադիր լսում ես:

— Լրագերում թնջ են ասում,—հարցնում ե նա ու չի սպասում պատասխանեմ, ինքն ե նորից սկսում:

— Այ, դիկտատուրը պրոլետարի. — ու բռնըցքը սեղմում ե:

— Դիկտատուր ենք, այ,—ու ձեռքը դնում ե Բու-նլաթի ուսին:

Բունլաթը շատ քաղաքավարի յե, հենց վոր ինձ տեսնում ե, տեղ ե բացում ինձ համար նստելու, ու հայերենով կամ ռուսերենով հրավիրում նստելու — ստղիս, համեցիր տովորիշչա կենա:

Սեղբակն անպայման հրավիրում ե թելի, իսկ լեթե  
մերժում եմ վիրավորվում ե:

Ապա մկնում ե պատմել իր անցյալ կյանքից, Բու-  
նյաթն իլ միշտ հավանություն ե տալիս:

Իմանում ես, ընկեր Լենա, են ժամանակն Անդիեն  
թարանից մեր հանքերը, զիտես թե վագոններով առ-  
բան...

—Պրավիլնո, —հասկանալով ասում ե Բունյաթը:

Յերբ Սեղբակի կինը թելը բերում ե, Սեղբակը  
վեր ե կննում լվացվում ու նորից նստում սեղանի  
մոտ—շարուակում պատմել, կամ հարցեր տոլ. —կտ-  
ռավարական, կոռպերատիվ, —ինչպես ինքն ե ասում:

Հետո ուշ գիշեր ե դառնում, Բունյաթը հոգնած  
գլուխը հակում ե ու մենք գնում ենք քնելու:

ԼԵՆԱ

## ՄԱՍՅՈՐ ԼԻՊԸ

Կիմա, յես յերբեք մենակ չեմ մնում, մեր բանվոր  
տղերքը շատ ընկերասեր են, ակումբում թե ճաշշարա-  
նում հավաքվում ենք իրար մոտ, վոնց վոր մի մորից  
ծնված լինենք, ենապես ենք իրար սիրում:

Հենց վոր մտնում եմ ճաշշարան, կանչում են ամեն  
կողմից—ընկեր Լենա, համեցեք մեզ մոտ:

Մանաւոր Լիոլը ձգում ե թելից ու անպայման ի-  
րենց սեղանի մոտ տանում:

—Մենք քեզ չենք թողնի, վոր ուրիշ սեղանի մոա  
նստես. եդ մեռած բան ա,— ասում ե նա չխկչխկաց-  
նելով ափսելին ու պատվիրում ե նորից մի բաժին  
ճաշ: Ճաշը շատ աշխատ ե անցնում:

Կիպը զալրացնելու համար մանտայոր Բենոլին՝ հիշեցնում ե կանտորի գրադիր տղջկա մասին:

— Կատինան լեկավ տես, Բենո...

— Լիպ, ամոթ ե, դինջ մնա, իմ ու քո տունը չի, ճաշարան ե, — ասում ե Բենոն հոնքերը վրա համաքելով:

— Իհարկե իմ ու քո տունն ե, — պատասխանում ե Լիպը:

— Հերիք ե, Լիպ, Բենոլին ձեռք առնես, — ասում ենք ամենքս մի կողմից:

— Հարկավոր ա սրան. են աղջիկը չի սիրում, իսկ սա խելագարվում ե, հա, հա, հա... 20 մոմանոցը, վոր կողքով անցնում ես, քիչ ե մնում հանդիք — ասում ե Լիպը համառելով:

Ամեն որ մի հետաքրքիր բանի մասին հնք խոսում, ու հանգստացած խմբովին դուրս ենք դալիս ճաշարանից

Կարմիր օնուրների մի մեծ, ողակ թևին, Լիպը լեռեկ յեկավ լուսս նորոգելու:

Նա աթոռը դրեց սեղանի վրա ու բարձրացավ:

— Ես ըոպեյին նորոգեմ լույսդ, — ասեց նա օնուրների ողակը քանդելով: Նրա հաղթանակամ մարմնի տակ ճոճվում եր իմ սեղանն ու աթոռը. լիս բռնեցի աթոռից:

— Զվախենաս, վեր չեմ ընկնի:

Ես աթոռը բռնած նայում եյի նրան, իսկ նա արագությամբ ամրացնում եր օնուրներն ու դրուցում: Մեկ-մեկ թևերը ցած եր զցում նալում ինձ ու ելի շարունակում աշխատանքը:

— Արևս վկա, ընկեր Լենա, լես քեզ մութը աեղը չեյի թողնի, ել ի՞նչ ընկեր եւի:

Նա իր կենսագրությունը պատմեց շատ հասարակությանը՝ կարծիք կարծիք՝ մեռած եր, մայրը գյուղումն ե, յեղբոր մոտ, իսկ ինքը փախել ե գյուղից, հինգ տարվա ըանվոր ե, առաջ հանքափոր ե յեղել, հետո դարձել ե մանայոր: Ինքն իրեն սովորել ե մանայորությունը, առում ե՝ շատ և սիրում, և ինժեներ Բարխուդարյանը նրան իր մոտ եր վերցրել:

Իր կարճ պատմության հետ վերջացրեց նաև լույսի աշխատանքը. ավելացած օնուշները դրեց սեղանիս ու ինքը նստեց կողքիս:

—Արևս վկա, ելեկտրական գործը սիրում եմ, իսկի չեմ թողնում, վոր Բարխուդարյանն առանց ինձ մի վիճակ շարժի, հետեւում եմ նրա պլաններին ու սովորում եմ, ես յերկու տարի յե, վոր յեկել ե, շատ լավ գիտություն ունի, վերջացրել ե Շվեյցարիայում: Մեկ-մեկ սկսում եմ պլաններ զցել, մենակ գիտությունն ե պահանջում, թե չե կարող եմ արևս վկա կայաններ կռուցել:

Եես նայում եյի նրա սե, անհանդիսա աչքերին, վոր միշտ աշխատանքի սովոր պարզություն եյին արտահայտում:

—Լիպ, ալժմ անհրաժեշտ ե, վոր մանավանդ բանվոր կոմսոմոլիստները գիտություն սովորեն, — ասեցի յես:

Նա չեր սիրում յերկար նստել, վեր կացավ.

— Դնանք հիդրոկայան, քեզ մանրամասն բացատրեմ:

Եես համաձայնեցի: Մի քանի քայլ զցեցինք և արդեն հիդրոկայանն եր. նա ցուց տվեց շարժական

կամուրջը, վորը կամարի պես կախվել եր զետի վրա:  
— Անցնի ևս նոր կամբջով, եղ կողմերը լավ մտիկ  
տուր. հիմի եռենց արի. — բարձրանանք վերև, վորաե-  
ղից ջուրը ներս և խուժում տուրընների մեջ. Նո-  
րոնել եր իմ թեկոց, — հ'ը, զգուշ ման արի — եղ հավաք-  
ված ջրերը շատ խորն են, — տեխնիկա յի, եղաղես ա-  
պահանջում սարքել:

Հիդրոկալանի շնորջը պատելուց հետո մոտանք ներսը:  
— Հը, տեսնմում եմ, — ելի անհամբերությամբ ասեց  
Լիպը:

Մի ընդարձակ սրահ եր, մի կողմում ելեկտրական  
լերկու մեծ մեքենաներ անընդհատ պատվող, մյուս  
կողմում փոքրիկ բաղկոն, ուր նստած եր մի մարդ,  
իսկ պատի վրա ելեկտրական զանազան աստիճանա-  
ցուցեր, ու դրանց մի կողմում մարդկային կմախք  
եր նկարված, տակին դրված եր — ռմահացու յե»:

Այդ բալկոնի մարդը, վոնց վոր ելեկտրական տոկը,  
խիստ հայացքով նայում եր մեղ:

— Եզտեղ ելեկտրականության ուժն ե, բոլոր հներ-  
գիան. Նրանք բաժանման կետերն են, — տակ Լիպը:

Մոտորի անընդհատ չխչխիկոցն ու ելեկտրական  
նշանացուցերի, զանազան մասերի պատկերները  
տիրել երին ուղեղու:

Մոտեցանք մոտորին, Լիպն առանց դժվարանալու  
իմ բոլոր հարցերին բավարարում եր:

Դռ՝ ո՛ո՛, դռ՝ ո՛ո՛, — աչքերս պատվող տնիվի հետ  
դնում ելին, վոնց վոր ամբողջ մարմինս դողում եր ու  
ցուրտ քամի եր կաշում դեմքիս: Իսկ Լիպը վոնց վոր  
փողոցում, կամ մեր տանը, հանգիստ խոսում եր. նրա  
ականջները սովոր ելին ալդ աղմուկին:

Ձեռքս զգուշությամբ մոտեցրի պատվող անխվին:  
— Հը, հանաք մի անի, ուղում ևս ամրող թեզ  
թռչիր...

Յես հետ քաշվեցի, այդ ըստելին Լիոն իմ աչքում  
մի մեծ գիտնական եր, ինը ըացաւրում եր, թե ա-  
մին մի վիճակ ինչի համար եւ:

— Ալ, ինժեները, — բղավեց Լիոնը, յես հետ դարձա,  
նա խոսում եր քայլոնի մեխանիկի հետ: Նա զվագեց  
գեղի մեր կողմն ու կամաց-կամաց առաջ լեկավ. նա  
փոքրամարմին եր, Լիոնը՝ նրա մոտ աժդահա յեր լե-  
րիվում,

— Ընկեր Բարիսուրարյան, ծանոթացիր — ընկերու-  
հիս ե, կոմսոմոլի աշխատող.

Շատ ուրախ եմ, — ասաց նա քաղաքավարությամբ  
ու մինչ յես մեկնել եյի ձեռքս, նա շատ հաճում  
եր կաշվե ձեռնոցները, ապա վլուխը թեքելով գեղի  
ինձ՝ սեղմեց ձեռքս:

— Ընկեր Բարիսուրարյան, հասարակ չի, բանվորու-  
հի յե, — ծանոթացնում եր Լիոն ինժեներին իմ հա-  
մասուն կենսավրությանը:

Ինժեները Ժալտաց, վատից գլուխ չափելով ինձ:

Մի քանի անգամ զնացինք — լեկանք ելեկտրասրա-  
հում, իմ մի քանի հարցերին ինժեները պատասխա-  
նեց ավելի քարդ լեզվով. մասնավիտական բառեր եր  
դործածում, յես մի քիչ դժվար ելի հասկանում, Լիոն կողմնակիորեն ոգնում եր հասկանալու: Մենք  
դուրս լեկանք կայանից, ականջներս դռնում ելին:

Եերք մոտիկից ես տեսնում, ավելի հսկա, ավելի  
խոշոր ե թվում տեխնիկայի ուժը, մինչ այդ յես չելի  
զբաղվել այդ հարցերով այդքան մոտիկից:

## ՀԱՆՔԵՐՈՒՄ

Այդ որը գյուղ չելի գնացել, տանն ելի. Լիպը  
լեկավ, վորոշեցինք գնալ Հանքերը. Խոստովանվում  
եմ, թափառելը սովորություն ե դարձել, տանը լեր-  
կար չեմ կարողանում նոտել. Արևն ալբում եր մեջք-  
ներս, մենք բարձրանում ելինք դեպի պղնձահանքերը:  
Մեկ շուրջս եյի նայում, մեկ Լիպին, վորի աչքերն  
արեի պես ուժով ալբում ելին հայացքս:

— Ի՞նչ ես մտիկ տալիս, հասարակ եմ, մանուկու-  
տղա լեմ,—ապա լերեխայի պես բացականչեց—տես  
բլուզիս կոճակները լես եմ կարել, ամեն ինչ սովորել  
եմ, բանվոր մարդ եմ, բայց դիտես ընկեր Լենա, ժա-  
մանակն ե, վոր բանվորից՝բանվոր-սպեցիալիստ առաջ  
դամ:

— Դու մի ծիծաղի, հանաք չեմ անում, սիրառ  
վառվում ե, վոր գիտություն չունեմ...

Հավատացնում եմ Կիմա՛, Լիպը հասարակ ու պարզ  
ընկեր ե, նա ծածկամիտ չե, ասում ե իմ գաղտնիքն  
են ե, վոր ինժեներ եմ ուղում դառնալ, եղ ել քեզ ա-  
սեցի: Աղջիկ սիրեմ, են սահաթը, կասեմ—վոր հա ասեց,  
կամ չե, լես ել իմ վճիռը կտամ, դուզն ասա, դուզը  
գործի:

Տունելների մոտ ելինք. Սեղրակի ու Բունյաթի  
փոքրիկ տղաներն ինձ նկատել եյին, վազեցին ու  
բռնեցին շորերիցս, լես շայում եյի նրանց գլուխները,  
վար արեկց տաքացել եյին ու քրտնել:

Բունյաթի տղան, հրեց Սեղրակի տղային ու ինքը  
մտավ թեփո տակ: Լիպը ծիծաղում եր, — ինչքան են

քեղ սիրում, դըանք մի-մի բանվորացու յեն, հմ. — Լիպի խոսքերը նրանք ուշադիր լսում եյին:

— Յես ել պետք ա հայրիկի հետ տունելումը բանեմ, յես հմա կարում եմ տունելը գնալ, — ասեց Սեղրակի տղան:

— Իսկ իմ հայրիկն ինձ կոմսոմոլ կտանի, հետո ել կուսակցություն. — պարծեցավ Բունյաթի տղան. յերեխաների հետ զըուցելով հասանք տունելի մուտքին:

— Այ հայրիկի ընկերը, սև կարոն հարբել եր... ինժեները նրան ցուցակում գրել ա... շարունակեց Սեղրակի տղան:

Իմ հայրիկն ել ա ցուցակում դրված, — հետ չմնալու համար ասեց մյուսը:

— Լենա՛, կարդղ ես ներս գալ, հարցը եց Լիպը, — յես ուզում եմ անզայման ներսը տեսնել:

Մի քանի քայլ արինք շեմքից դեպի ներս, Սեղրակը հանդիպեց.

— Բարե ձեզ յերիտասարդ ընկերներ, գիտեմ լեկել եք մեր հանքերը տեսնելու. հը, Լիպո, հանքը մտահան չես անում:

Խուլ ձայներ ելինք լսում խորքից, յես սկսեցի առաջ գնալ:

— Սպասիր, ընկեր Լենա, ոդը ծանը ա, չես կարող, վատ ժամանակ լեկաք, են կողմում քանդվում ե, եսա բանվորները դուրս կդան, չենք բանելու.

Բունյաթը վագոնետկայով քաշում եր կոտրտված պղնձահանքը. հենց վոր մեզ տեսավ բարեեց ու կանգնեց ճակատի քրտինքը սրբելով:

— Տովորիշչա Լենա, մտիկ անում եք հմ:

— Ամսոս վոր չենք կարող տունելը դալ, — պատասխանեցի յես:

— Եսոր դժար ա հա, մի ուրիշ որ համեցիր, եսոր ինժեները մեղ ել չի թողում բանենք...

Խուլ զնդոցներ ելին լավում:

Դե հիմի յիս գնացի, — ասեց Սեղբակն ու հետ դարձավ զեպի տունելի խորքը, իսկ Բունյաթը քշեց իր վաղոնետկան:

Յերեխաները դուրսը խաղում ելին հանքաքարերի հետ, բանվորները զնում ելին, զայիս. Նրանց զույնը զարմանալի նման եր հանքի գույնին՝ վոնց վոր պղնձի կտորներից քանդակված լինելին: Մենք ահապին աեղ ման լիկանք:

Դիտե՞ս Ալահիվերդում հարթ տարածություն չկա, բոլորը ըլուքներ, լեռներ են, դրա համար մարդ շատ ե հոգնում:

Մի քիչ հանգստանալուց հետո, բարձրացանք ծըծումքի գործարանը, ծծումքի հոտից շնչառությունս կտրվում եր, լիսան սկսեց, ծիծաղել:

— Հն վիճու ե, դիմացիր:

Մեղ հանդիպեց մի ծերուկ. Լիոլը ծանոթ եր նըրան:

— Բարհվ, բարհվ Սեփան, վո՞նց ես, — ըղավեց լիոլը ու ձեռքը բռնեց:

Մերուկը լիրիար մորուք եր թողել և զարմանալի ուրախ արտահայտությամբ եր նայում մեղ:

— Սեփան, ես աղջիկն ուզում ե գործարանին ծանոթանա, դու մեղ առաջնորդի — ասեց Լիոլը:

— Կնիկմարդն ընկերացուդ ա, — հարցրեց նա աչքով անելով.

— Հա, — պատասխանեց Լիալը ծիծաղելով:

Սեփանը ձեռքերը մեջքին դրած առաջ ընկալվել:

Լիալը պատմեց, վոր Սեփանը շատ հին բանվոր և Ալահվերդու հանքերի, հիմի ծերության պատճառավով և չի բանում. նա չի ուզում բաժանվել դործարանից, առում և հստեղ ովհափ մեռնեմ — դրա համար նրան ոռնիկ են տալիս և նա ապրում է գործարանի բակում, վորպես պահակ և եկակուրսանաներին առաջնորդող:

— Հը՛, մտիկ արեք, — ասավ մեղ ծծումըի այլընան տեղն առաջնորդելով, — Չահել եք, ամեն ինչ պիտք կը գտ, սովորեցեք, — ասում եր նա ձեռքերը մեջքին դրած, վոնց վոր գործարանի տերն ու տնօրենը լինեք:

— Ախալե՛ք, մենք տանշվեցինք. դուք վայելիք...

— Սեփան ասում են Ժամանակին լավ քեզն ըստ բել:

Սեփանն աշքով արեց և ծիծաղեց:

— Ախալեր բանվոր ելի, ըհ՛ը եռ լերկու ձեւներս եր ու իմ ուժը. համա լավ տղամարդ ելի — տեխնիկ-ների ու ստրամնիկների. կնանոցը վոր աշքով չելի առնում, հալվում ելին... Բանապետական կաթ ծծած ստրամնիկները շատ անխիղճ ելին. հարբում ելին ու սալովի կը ունի կներով կնիկներին ծնծում, դրա համար նրանց աշքը գուրան եր ու ինձ հետ շատ զոստ ելին, — հե հե, — հառաջեց Սեփանը, — ենքան տանշվեցի, բանեցիւբանեցի, հնաց չեղալ, վոր կնիկ տռնելի, մարդակարի ապրելի. յես թաղավորի,.. հիմի ասել եյի հետդ կնիկարժմատ վոր հիները.

— Սեփան, տխուը բաներ մի ելշի, ուրախ բաներ ասա, — ասեց Լիալը:

— Հա—հա. մտիկ արտ ջահելին, ծերուկիս թւզում

Ես խոսեցնել շատ բան եմ տեսել ու գիտեմ, են իշխանությունը փտել եր, աստված հոգիները լուսավորե, — ասեց Սեփանը ծաղրանքով: — Ես սադատիկ արեք հիմի մերն ա, մոտեցեք եստեղ, — մեզ ուրիշ կողմեր տարավ—ամբողջ գործարանը պտտեցինք:

Եերբ դուրս ելինք գալիս, Սեփանն իր պարտականությունը կատարած համարեց, մնաս բարով արեց ու ձեռքերը ծնկներին դրած՝ նստեց քարի վրա:

Տուն ելինք վերադառնում, յերկի հոգնածությունից եր, յերկուսս ել լուռ ելինք:

— Ուզում եմ մի բան ասել, խոսեց Լիպը, մի քայլ հետ մնալով:

— Ի՞նչ,—խորամանկությամբ հարցրի յես, առաջվա միամիտը չեյի, արդեն վորոշ փորձառություն ունեյի ու հասկանում ելի նրան:

— Լավ, եգուց կասեմ, հիմա գնում եմ Բարիսուդարյանի մոտ, հիշեցի, գործեր կան: Լիպը քայլերն արագացրեց:

Անկեղծ եմ ասում կիմա, յես չեյի ուզում, վոր նագնար, դու դրա համար ել չմեղադրես. տիրությունս շարտահայտեցի, ասեցի—յես ել գործեր ունեմ ու դեպի տուն թեքվեցի:

Կիմա, յերբ հաշիվ եմ տալիս ինձ, ամեն որ նոր մարդ եմ դառնում ու յերեկվանը չեմ. յես զգում եմ, վոր լրջանում եմ ու հասունանում, ուզում եմ ավելի խորը սիրել, ուզում եմ բոլոր կողմերով լրիվ ապրել ու ցիալիստական կյանքը:

Լ Ե Ն Ա

## ԻՆԺԵՆԵՐ ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆԸ

Յերեկ վերադարձա գյուղերից, տղաներին չհանդիպեցի, նրանք ժողով ունեցին, իսկ յես հոգնած եյի, չուզեցի ժողով գնալ։ Մի քիչ պառկեցի, հետո հանըերությունս չտարավ, դուրս լեկա տանից, բարձրացազեպի հիդրոկայանը, նրա շուրջն զբունելու լավ տեղեր կան։

Մտածում եյի գյուղի պակասների մասին, լերի առաջարդությունը շրջիկ կինոներ և պահանջում, պետք եր անպայման աւդ իրադործել, քաղլուսվարի և այլ հիմնարկների միջոցով։ Հիդրոկայանի դռոցը հիշեցնում եր Լիպին, անպայման ուղում ելի նրան հանդիպել։

— Բարե ձեզ,—գլխարկը հանած, բարեւում եր ինժեներ Բարխուդարյանը, ինչպես լերեւում եր յես նրան ուշ նկատեցին։

Զնալած յերիտասարդ եր, բայց գլխի մազերը նոսր ելին, իսկ մեջտեղը բացվել եր սպիտակ մորթը։ Մոտեցավ ինձ ու գլխարկը ծածկեց։

— Հնկեր Լենա, լերեւում ե, վոր ձեզ շատ և դուք յեկել, հիդրոկայանը չափազանց ուրախալի յե, յերբ յերիտասարդները հիանում են տեխնիկայի հրաշալքներով։

Պատասխանի փոխարեն յես գլխով արեցի. նազըուցելով սկսեց ինձ հետ քալել. ճիշտն ասած մասնագետների հետ յես չելի խոսել, առաջին անգամ առիթ ունեցա խոսելու։

Յերեակայիր, կիմա, անսովոր քաղաքավարություն-

Ե ցույց տալիս. փոքրիկ փոսերի վրայով անցնելիս՝  
բարձրացնում եր թեիցս. և ծիծաղս եր զալիս և  
անհարժար ելի զգում: Ինչքան խռուսափում ելի, ելի  
չեր լինում, անպայման ուզում եր ոդնել, են չեր տես-  
նում/վոր, իրենից լավ եյի թաշում: Կարծես վաղուց  
չեր խռոել, ամեն առիթով հենց ուզում եր ինքը խռ-  
ուել: Հիացմունքով եր պատմում Շվեյցարիալի մասին,  
վորտեղ ինքը ավարտել եր համալսարանը

Պարսկաստանցի յե, շատ հարուստի տղա լի լեղել,  
հիմի աղքատացել են: Ինքը յելել և Հայոստան, իսկ  
քուըը մնացել և այստեղ:

— Հիմի ել՝ ուրախութիւնմը կղնամ Շվեյցարիա,  
բայց բաց չեն թողնում:

— Ինչմւ լեք զնում, չե՞ վոր մենք մասնադեաներ  
չունենք,—վերջապես խռոեցի լես:

— Ծիշտ ե, պատասխանեց, — ախր ալնտեղ կարե-  
լի լե գիտության մեջ շատ առաջ գնալ, որական տասնյակ  
ժուրնալներ եյինք ստանում, միշտ տեղյակ եյինք  
տեխնիկայի վերջին խռոքին. այստեղ ամիսներով մի  
այնպիսի ժուրնալ չի ընկնում ձեռքներս ենձ այստեղ  
ել մեծ աշխատանք ելին տալիս, իմ պրոֆեսորը չեր  
թողնում, վոր զամ:

— Վոր ուղենաք ալստեղ ել կստանաք այդ ժուր-  
նալները — ասեցի լես համոզված

Ինձ թվում եր, վոր նա չափաղանցնում եր:

— Տիուր ե, մանավանդ Ալլահվերդիում, կանալք  
պակասում են. մի քանի մաշինիստկաներ կան, վո-  
քոնք ուղղակի ձանձրացրել են:

Յերբ լես ծիծաղում ելի նա ավելացրեց.

— Ճշմարիտ եմ ասում, ընկեր ևենա, անհրաժեշտ

և, վոր մարդ կտնանց շրջան ունենա, նրանք լրացնում  
են կյանքը:

Կիմա, լերը խոսում եյինք քաղաքական հարցերի  
մտախն, նրան այսպես ելի ջախջախում, վոր ասում  
եր, — բրավո՛, դուք կատարյալ քաղաքագետ եք — իսկ  
զիտության հարցերում խոստովանվում եմ, նրա հետ-  
չեցի կարողանում վիճել...

Մենք հասել երինք շարժական կամուրջին ինժե-  
ները շարունակում եր.

— Արինակ, ձեզ նման յերիտասարդ, աշխույժ կանալք  
շատ հետաքրքիր են, վորովհետեւ դուք ամբողջու-  
թյամբ թարմ եք, սառոհրդալին յեցկրի լավագույն  
ստեղծագործություններից եք դուք...

— Ի՞նչ կարիք կա եղախսի բաներ ասելու:

— Վորովհետեւ, յարը դուք վիճում եք, քեզս գալիս  
ե, վորովհետեւ դուք կին-մարդ եք, բանվորուհի յեք  
յեղել, այդքան տառջ եք գնացել. յես սրտանց ուրա-  
խանում եմ. — ասեց նա վոգեորված, շատ հետաքրքրա-  
կան ե ձեզ նման կուլտուրական բանվորուհու սիրել:

— Ախր դուք բանվորուհու հետ չեք հարմարվի, նա  
հասարակ ե, իր աշխատանքով տարված, դուք չեք  
հարմարվի, — պատասխանեցի յես համարձակ:

— Հենց այդպես, դուք ինձ հաղթեցիք, — ասեց նա  
ծիծաղելով:

— Շատ եմ պտտել Յեվրոպայում, շատ կանանց հետ  
եմ խոսել, բայց դուք բոլորովին ուրիշ եք, յես այդ  
խոստովանվում եմ... իմ հետաքրքրությունը վառվում  
ե ձեզ նման կանանց հանդիպելիս, իսկ յես ձեզ նման  
կին ծանոթներ քիչ ունեմ:

Յես ծիծաղում ելի, համարձակ ու պարզ նայում  
նըա աչքերի մեջ. նա զննում եր ինձ:

— Տվեք ձեր ձեռքն անցնենք շարժական կամուրջի  
վրայով մլուս ափը, — առաջարկեց նա ձեռքը մեկնելով:

— Վհչ, յես մենակ կանցնեմ, — պատասխանեցի յես  
ու բարձրացա կամուրջի վրա:

— Զի կարելի, ընկեր Լենա, դուք կկորցնեք ձեր  
հայլասարակշունչությունը:

Թեպետ մի քիչ որորվեցի ու դողղողացի, բայց մի  
շնչում մյուս ծայրը հասա. նա ել լեկավ մլուս  
ափը:

— Բըավո ընկեր Լենա հերոսուհի լիք, իսկ իմ ծառ-  
նոթ մաշինիստկաներն ամեն անգամ կամուրջին մոռե-  
նալիս ծղրտում են, դուք... բրավի...

— Յեթե ալսպիսի հասարակ կամուրջներից չկարո-  
ղանանք անցնել, ել ի՞նչ սոցիալիզմի կառացողներ  
ենք, — պատասխանեցի յես:

— Հիմա բարձրանանք վերև, այնտեղից շատ գեղե-  
ցիկ ե տեսարանը, յերբ լուսերը վառվում են և այս  
փրփրած ջրերի մեջ արտացոլում: Ընկեր Լենա, մի  
որ յեկիք սենլակս. կտեսնեք իմ ելեկտրական վառա-  
րանը վորի վրա թեյ եմ տաքացնում, իսկ Յեվրոպա-  
յում ելեկտրականությամբ և սենյակներն են մաքրում  
և զգեստները: Ամեն մի յերկը աչքի լուսի չափ ան-  
հրաժեշտ ե ելեկտրականությունը:

Յես տարվել ելի գիտության այդ մարդու պատ-  
մություններով, յերեխ դեռ յերկար խոսելինք յեթե չնկա-  
տեյի որորվող մի ստվեր, վոր արագ սահում եր շար-  
ժական կամուրջով. յես լենթաղբեցի, վոր զա Լիալը  
կլինի և չսխալվեցի:

— Բարենվ, ընկեր Բարիսուղարյան, եը լենա, վա-  
ղմուց ես լեկել, — շնչառությունը կտրվելով՝ ասեց  
Լիպը:

— Վաղուց, — պատասխանեցի լես ու նստեցի քարի  
գլուխ:

Լիպն ու Բարիսուղարյանն սկսեցին իրենց աշխա-  
տանքներից խոսել, իսկ լես նրանց չելի լսում, նա-  
յում եյի պապղուն ջրերին և ուրախ եյի և անհանդիսաւ:

— Լենա, դե գնանք, եսորվանից չե՞ վոր պիտի  
միասին կարդանք, ասեց Լիպը թեկոց ձգելով:

— Դուք վաղուցվա ընկերներ եք, — հարցըց ինժե-  
ները:

— Յերեկ ու եսոր միայն, — ասեց Լիպը ծիծաղե-  
լով:

— Ի՞նչպես, — զարմացավ ինժեները:

— Նատ պարզ, վորովհետեւ յես ել, սա ել, չերեկ  
ենք ծնվել:

— Սատանան տանի ձեր լեզուն, գլուխը պտտեց  
ինժեները:

— Լիպ, դու փիլիսոփիայել ել դիտես. ասեցի լես,  
յերբ բաժանվեցինք ինժեներից:

— Յերբ տեղն ե դալիս, ամեն ինչ գիտեմ. Ինժե-  
ները, կանգնած, նայում եր մեր հետերց, արդեն գի-  
շեր եր, ելեկտրական լույսերը վառվում ելին:

ՀԵՆԱ

## ՄԻ ՊԱՐՁ ՍԵՐ

Լիպի սենյակը աղքատիկ եր. մի մահճակալ եր  
գըված, անկողինը մոխրագույն աղջալով ծածկված:

Պատուհանի գողում, աթոռների վրա մանայորին հարկավոր դործիքներ, լամպչկաներ և շնուրներ ելին դրված:

— Ահնա, եսոր զործից լեկն եմ ու զնացել ժողով, սենչակո չեմ մաքրել, չկարծես շաղ ընկած եմ—

— Լավ, լավ—ծիծաղեցի յես:

— Եսքան և իմ ունեցածը, — ասեց նա ու նստեց անկողնու վրա, — արի նստի կողքիս մի քիչ խոսենք, հետո եղուցվանից կակսենք լավ պարագել:

Նստեցի: Յես ել չեյի ուղում, վոր պարապենք:

Լիովը բուռղի կոճակների հետ խաղում եր, բացում եր ու կոճկում:

— Հինա, ախը քեզ սիրում եմ, բա դու չգիտես:

— Դե յես առաջվա միամիտը չեյի, վոր չիմանայի. յես ծիծաղեցի:

— Իմ արևը, բանվորի դուդ սրառվ եմ ասում, թողն նում ես համբուրեմ, — նրա աշքերը կըակվում ելին:

Գլուխը քորելով շարունակեց ցածրաձայն, — թե չես համաձայնվի, ելի դուդ սրտով ընկերություն կանեմ հո փալաս չեմ:

— Համբուրիր, — ասեցի յես համարձակ ու մոտեցը այսերս նրա զբթունքներին:

Մենք նստած ելինք, Լիովը ձեռքը դցել եր իմ վզով. յես պատմում ելի այս դեպքի մասին. յես Հայկի անունը չտվի, այլ անցքեցը ճիշտ պատմելով՝ կապեցի մի կոմսոմոլիստի հետո:

Լիովը լուռ լսում եր վոաներն իրար քսելով, մեկ մեկ խռովուում եր ճակատը. յես վերջացրի, նա բացականչեց:

— Յես ասում եմ, նա փալաս ե յիղել:

Յես ուղում եյի, վոր դու այլքանն իմանաս, ասացի յես իմ պարտականությունը կոտարած համարելով:

— Ինչ վոր ե, հիմի ել սրառմդ բան չկա ու չես սիրում, նայեց շեշտակի աչքերիս մեջ:

Յերբ իմացավ, վոր ամեն ինչ վերջացած ե, բացականչեց, — մենք ել եղ կուղելինք իմանալ ու սկսեց յերգել «Ել խնձորիկ» ու փաթաթվեց ինձ:

Առաջին անգամ ուժդին, շատ ուժգին սեր զգացի յերտիներիս մեջ:

Կիմա, յես դիտեմ, յերեի սկսեցիր ինձ նախատել վոր շուտ համաձայնվում եմ — դու սիրո խնդրին միքիչ նեղ ես մոտենում ու դրա համար ել վախենում ես: Իմ բոլոր քալիերը յես համոզված եմ զցել: Այժմ հավատացած եմ, վոր կիպի հետ կլինենք սրառպին ու պարզ ընկերներ:

Կիպը տեղափոխվեց իմ սենյակիը, իսկ իր սենյակը ավեց ընկերներից մեկին:

## ԼԵՆԱ

### ՎԵՐԱԴԱՐՁԻՆ

Վերադառնում եյի շատ մոտիկ մի գլուղից: Վերջալույսի շողերը հենց ուղիղ ընկել ելին աչքերիս մեջ ու թուլացրել տեսողությունս, դրա համար գլուխս կախել եյի: Հանկարծ մի մեծ վորսորդական շուն փեշերիս կոչէիլով անցավ կողքից:

— Զվախենաք, — բղավեց մի ծանոթ ձայն:

Գլուխս շրջեցի, մի քանի քայլ ինձանից հեռու, դալիս եր ինժեներ Բարխուդարյանը:

Կանդնեցի, նա մոտեցավ ու սեղմեց ձեռքս: Նրա ուսին զցած եր հրացանը և պայուսակը:

Յիմ հաճելի վորսորդությունից եմ վերտագառնում. մի քանի վայրի թաշուններ եմ խփել — հրացանը և Բարդան (շան մասին եր խոսքը) իմ ոկնուկաներնն են — ինձ արդեն այս շրջանում գիտեն, վորտես վորսորդություն սիրող ինժենների:

Ելի զլուխս կախեցի, արեք ծակում եր աչքերս: Մենք հավասարվեցինք ու քայլում ելինք կողք-քողքի:

— Շատ հետաքրքիր ե, լեռը ձեզ նման մի լեռիտասարդ աղջիկ, գարձել ե զյուղերի թաշուն ու չի խնայում իր առողջությունը. ինչպես ել մենակ ու հանգիստ վերադառնում ելիք, այդպիս Բջ ամենն ժամանակ, — ասեց Բարիսուդարյանը:

— Ամեն ժամանակ, — պատասխանեցի կարճ:

— Ափսոս եք, շատ եք չարչարվում, արեից այբ-վում եք ու քամիներից ծեծվում, կոշտանում ե ձեր գենքը:

Այսպես լավ ե, յես սովորել եմ, — պատասխանեցի կարճ:

Նա զննում եր ինձ: Հագինս չթե բարակ շոր եր ու վոտներիս չուստեր, չուստերով հանգիստ եյի քայլում:

— Միթե չեք մտածում, լեռեկոյան ցուրան ե, վերցրեք իմ պլաշչը:

— Սովոր եմ, այսպես հեշտ ե ճանապարհ զնալ:

— Շատ հետաքրքրական եք, արեից այրված դեմք ու այդ շորն ել ձեզ շատ ե ատղում:

Միշտ լավ խոսքեր ասելու սովորությունն ուներ նա, գրա համար քան չասեցի: Խոսակցությամբ տարրված քայլերը գանդաղեցրեց, սկսեց պատմել իր վորսորդությունից, թե վմբ կողմերում ավելի շատ թաշուններ կան: Ճիշտն ասած շատ եյի հոգնել, ըալց չելի ուղում

արտահայտելու նա ինպէսց, վոր քիչ նստենք, հանգըս-  
տանանք, իս համաձայնեցի ու թիկն ավելի խոռերի  
վրա. նա ել հրացանն ուսից ցած դրեց ու ելի թիկն  
տվեց: Շունը փեշերիս քավելով նստեց իմ կողքին:

— Տեսնում եք, շունա ձեզ շատ և սիրում, — կատա-  
կելու համար ասեց նա:

— Բայց յիս շներին չեմ սիրում:

— Իսկ Յեվրոպայում կանալք շները գրկած ման-  
են դաշիս ու ամեն ըովե համբուրում են նրանց դըն-  
իմկները:

— Այդ պարապությունից եւ:

— Լավ պատասխան եր, — ծիծաղեց Բարխուդար-  
յանը:

— Հավատացնում եմ, նրանք շներին աղամարդ-  
կանցից շատ են սիրում — շարունակեց նու ըարձր ծի-  
ծաղեւով:

— Յես ուղղակի հիանում եմ ձեր պատասխաննե-  
րից, դուք տաղանդ եք. ինչու ձեզ չեն ուղարկում սո-  
վորելու:

— Յեթե անհրաժեշտ լինի, կուղարկեն, ինքս կդիմեմ:

— Յես հետաքրքրվում եմ ձեղանով, — ասեց նա,  
շան գլուխը շոյելով:

Յես առաջվա միամիտը չելի, վոր չհասկանալի,  
ուղում եյի նրան ավելի լավ ճանաչել, թող խոռեր:  
Ինչու լեք հետաքրքրվում:

— Այն վոր շատ առողջ եք, աշխույժ, ձեր աչքերում  
լայն աշխարհ կա, հենց այդ և ինձ հետաքրքրում. — և  
ուրիշ շատ խոսքեր ասեց, մի քիչ լոեց ու ավելացրեց.  
— բայց գիտե՞ք, Յեվրոպայի կանալք ինձ շատ եյին  
սիրում:

— Բա ինչու չեյիք ամուսնանում — զարմացած հարցը  
ըի յես:

— Գրողը տանի, ավելի հեշտ և մի հիդրոկայտնի  
ողանն ու կառուցումը քան թե նրանց կապրիզները  
տանել: Հիմա յես սիրում եմ խորհրդային լերկը  
աղջիկներին, կոմսոմոլիկա աղջիկներին, վոր շատ ա-  
զատամիտ են և ուժեղ:

— Ե՞նչպես, — հարցը յես խոժոռվելով:

— Ան, վոր դուք աղատ սեր եք ընդունում:

— Հա, հա — ծիծաղեցի յես, — բոլորովին սիալ ու  
աղավաղված եք հասկացել: Մենք ամուսնությունը  
չենք ժխտում, և վոչ ել անբարութականություն ենք  
ընդունում:

— Տեր աստված, ընկեր լենա, ամեն րոպէ դուք  
ուզում եք ինձ հարվածել: յես ասում եմ այն սերը,  
վոր դուք եք ընդունում, — ու ավելի մոտեցավ ինձ:  
Արեն արդեն մայր եր մտել: ցուրտ քամի լեր փչում,  
մաղերս թափվել ելին լերհսիս:

Յես հրեցի նրան, շունը դունչը քսեց ձեռիս, հրեցի  
և շանն ու կանգնեցի:

— Յես իմ ամբողջ մասնագիտությունը տրամադ-  
րել եմ խորհրդային լերկին, իսկ դուք հրում եք  
ինձ, — ասեց նա բողոքող տօնով:

— Մենք գնահատում ենք ձեր նվիրվածությունը,  
ձեզ վարձատրում ե իշխանությունը, բայց հո չենք  
կարող մեզ ել տրամադրել: Վհչ բարեկամ, դուք սխալ-  
վում եք:

— Ո՞ւր ե թե ձեր մեջ կյանք կա, — նա քաշեց փե-  
քցաւ:

Յես խփեցի ձեռքին,

— Դուք կոպիտ եք...

— Այն, ի ըրեմն կոպիտ եմ:

Նա տարորինակ, շատ տարորինակ եր նաևում ինձ  
զբա, յես ովանցի արագ քայլել:

— Ուր ե, թե կյանք կա ձեր մեջ, իսկ յելրոպացի  
կանալը ինձ համար դժվում ելին. ասում եր նա իմ  
հետեւց շնչառպառ:

Հրացանը նորից ուսը զցեց ու թույլ-թույլ քայլում  
եր իմ յետեից. Բորդա՛, Բորդա՛, կանչում եր շանը,  
շունը հետ եր գնում տիրոջ մոտ ու ելի առաջ վազում:  
Նա ելի մոտեցավ ինձ ու աչքերը չուած բղավից,—կամ  
գուք եք խելազար, կամ յես:

— Վաչ, դուք ուրիշ մարդ եք, յես ուրիշ, մեղ սիւ  
քելու համար հարկավոր եք մեղ պես զգալ:

— Հա, հա, այժմ յես գտնում եմ, վոր դուք հիմա-  
րութիւններ եք ասում. յես հսկայական ջրեր եմ շուռ  
տալիս, իսկ դուք Բնչ կարող եք անել, — ասեց նա  
չարախնդութիւններ:

— Իսկ մենք կարողանում ենք ձեզ դեկավաբել  
իսկ մենք կարողանում ենք հեղափոխութիւնն անել  
— պատասխանեցի յես համարձակ ու խիստ:

Տուն գնացի. Լիպը տանն եր, բարձր արամազրու-  
թիւմը բռնեց միջքից:

— Բեզարթելես, հա, Լենա ջան, քանի՞ գյուղ դնացիր.  
— ու համբուրեց ինձ:

Սիրոս թրթուց ուրախութիւնից, եւ ավելի ինձ  
զգացի և համարձակ ե՛ հղոր պայքարի մեջ, ին-  
ժեների մասին չպատմեցի, մտածելով, վոր կարիք  
չկար մտքերը հուզել. մտնավանդ միասին ելին աշ-

իստում, կարող եր զժառաթլուններ առաջ դալ ու պրանից գործը կտուժեր:

Ես սպառկեցի հանգստանալու, Հիպը թեյ եր պատրաստում. մտաբերեցի ինժեների խոսքերն ու դարձա Հիպին.

— Հիպ, դու պետք ե ինժեներ մասնավետ դառնաս, դու պետք ե մերը լինես...

Նա դարձացած նալեց,—ինչո՞ւ հանկարծ լևնու, այլպես ասեցիր:

— Վորովինակ մենք մեր բանվորներից ու կուսակցականներից մասնագետներ շատ քիչ ունենք:

— Վոր դու ել ես ասում, յես ել ավելի շատ եմ ուղղում բանվորից ինժեներ գառնար, ընկեր լենինն ասել ե Առքըդային իշխանություն պլյուս ելեկտրիֆիկացիա—ահա սոցիալիզմ։ Ես այդ պլյուսի համար պիտի դորձեմ։ Նա գրկախառնվեց ինձ, իսկ թիվն արդեն յեռում եր։

Բարեհներով՝ Լ Ե Ն Ս.

## ՄԻ ՄԵԾ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ

Ակամիվությունը վերցրել ելին կոմիերիտականները. առավտոյան վազ յես գյուղերից վերադարձա յերհսուն կոմյերիտականների հետ. բոլորն ել հայթանդամ աղաներ ելին։

Բանվորական մեծ շենքի հիմքը մեր կոմիերիտականների աշխատանքով եր բարձրանում. մեղ միացել ելին բանվորների կանայք, յերեխաները։ Ավագ ու քար ելինք կրում, նալում ելինք մեկոմեհելի ու ավելի

մողեսրվում։ Կիմա հավատո՞ւմ ես, յես իսկի չեցի  
հոգնում, մենք աշխատում ելինք մի մեծ դործի հա-  
մար։ Բանվորական ընտանիքները բնակարաններ չու-  
նելին, նրանց համար եր այդ շնչքը, դժվարն սկսելն  
եր, այսուհետեւ կկառուցենք։ Գյուղի կոմյերիական-  
ները խոստացան մինչև ցանքսերն սկսվելը մի քանի  
անգամ ել դար։ Մինչև արեք մայր մանելը մենք բա-  
նում ելինք։

Յերեկոյան, բանվոր ընկերների հետ գնացինք հի-  
պրովայրան, հետո գլուղի ընկերների համար կինո նկար  
ցոյց տվին, նրանք անչափ ուրախ ելին և բանվոր  
ընկերներին հրավիրեցին իրենց գլուղը։ Յերեկոն  
լուսնյակ եր, գլուղի ընկերներին ճանապարհ գցեցինք  
մինչև կես ճամբան ու յերդիլով վերադարձանք։

Ամեն որ աշխատանքից հետո, յերբ վերադանում  
ենք տուն իմ և Լիովի մեջ մի նոր մտերմություն և  
տռաջանում, այնպիս սիրով ու յերջանիկ ենք հանդի-  
ռում իրար։

Ե Ե Ա

### ԿԱՍՏՈՐԻ ԱՇԽԱ ՀԱՄԱՐ

Մալըն ու քույրը լաց ելին լինում, տան մեջ ա-  
հագին աղմուկ եր բարձրացեր Թանի որ եր մանալու  
թենոն խմում եր, մոր ու քրոջ հետ կովում ու դուրս  
դալիս թափառում։ Թանի անգամ նկատողություն եր  
ստացել վոչինչ չեր ոգնում։ Յերբ ներս մտա, մալըն  
լաց լինելով հայտնեց, վոր գնացել և կտնտորի աղջ-  
կանն սպանելու։

Մի բռպէ չկորցրի, վաղեցի Լիովի մոտ։

— Կիպ, բղավեցի յես, ու արագ շնչակտուը պատմեցի:

Հիպն իր աշխատանքը թողեց ու դլխարաց վաղեց. — գրողը տանի, մարդ չի, փալաս ե, մի աղջկա համար...

Յես ել նրա հետ վաղեցի. Բենոն թափառում եր կանտորի մոտ, հենց վոր մեղ տեսավ, դլխարկն աչքերի վրա իջեցրեց. յես բռնեցի նրա ձեռքից.

— Բենհ, գնանք մեր տուն:

— Զե՛, թողեք, յես պետք ե հենց ևստեղ փռեմ:

— Ամոթ ե, Բենհ, մի աղջկա համար դու կորցնում ես քու դլուխը, — ասեցի յես:

— Նո ինձ խարեց ու աժումնացավ կանտորի աղի հետ. ինձ լայազ չարեց, համ, — բղավում եր Բենոն:

Մենք համողելով նրան բերինք մեր տուն: Նա հարբած եր և սկսեց լաց լինել:

— Այ տղա, քսան մոմանոցի համար եղքան տանջվմամ ես. կանտորի աղջիկը թո՛ղ աժումնանա կանտորի տղի հետ, դու Բնչ գործ ունես:

Այդ գիշեր Բենոն մեղ մոտ քնեց, առավոտայն արթնացավ, ամաչում եր:

Բենոն լուրջ ժամանակը շատ մեղմ եր, ամաչկոտ և շատ ընկերասեր:

— Հիմի հանգստացմար չե, — ծիծաղեցինք մենք:

— Թքել եմ, թքել եմ, ել պրծավ. ասում եր նա աչքերը գետնին զցած:

Կանտորի աղջկա համար, համ, համ, համ... նըս ուսին խփեց Լիպը, ապա միասին թել խմեցինք, նրանք զնացին իրենց աշխատանքին, յես ել գյուղ մեկնեցի:

Լ Ե Ն Ա

## ԲԱՆՎՈՐՄԱՆ ՁԵՑԻՑ

Այս անդամ Բարխուղարանը սառը, բայց քաղաքավարի բարեկց ինձ: Դեռ նոր հավաքվել ու խոսում եյնք, յերբ գուուը բաղխեցին, յերկու մաշինիստկաները հարցնում ելին ինժեներին, մենք նրանց ներս հրավիրեցինք: Զմերժեցին Թացին մեր քեֆին:

Նրանք նստեցին Բարխուղարյանի յերկու կողմերում — իսկ յես նստել ելի Բունյաթի և Սեղբակի մեջ՝ տեղում:

Սկզբում սովորական խոսակցություն եր ընթանում, դեռ գինին մեջաեղ չեր յեկել: Սեղբակը հանքալին աշխատանքներից եր խոսում, իսկ մաշինիստկաներն ինժեներին չելին թողնում լսելու, իրանք ելին զբաղեցնում:

Վորպես սեղանի սպասավորներ Լիպն ու Բենոն կանգնած եյին, չեյին ուղում նստել:

Լիպը խորովածը պատրաստեց ու ընթրիքի ժամանակ գինին ել բերին մեջտեղ: Մերոնք սկսեցին խմել ու քեֆովանալ, սեղանի կարգը պահպանում եր Սեղբակը, բոլորս ել լենթարկվում ելինք կարգին, բացի մաշինիստկաներից, վորոնք, շարունակ լցնում ելին ինժեների բաժակը գինով:

Առաջին բաժակները խմեցինք հասակավոր բանվորների կենացը, յես բաժակս չվկացը Բունյաթի բաժակի հետ, ինքը միայն մի կում խմեց, նա սովորություն չուներ գինի խմելու: Յերգեցինք այդ կենացների վրա —

«Հայաստանում մի ամիս կա կարմիր մաշին առ.

բանվոր Սեղբակը մեղանից ել լավ պիտեր այդ  
յերգը. նա ասում եր կյանքումս միայն մի յերգ եմ  
սովորել ու լավ եմ սովորել

Ինժեների տրամադրությունը դեռ չեր լավացել  
մի տեսակ սառն եր ու լուրջ. նա ինձ հետ առաջվա  
պիս չեր ծիծաղում. Մաշինիստկաները Ամալիան և  
Մանյան անընդհատ ծիծաղում ելին:

— Լսեցեք, ընկերներ, հիմի խմում ենք մեր ազիդ  
ինժեների կենացը, — առաջարկեց Սեղբակը. — մեր  
զործի մարդն ե, ընկերական ե:

Մենք ծափահարեցինք ու մեր բաժակները դարձե-  
ցինք ինժեների բաժակին:

Ինժեները կամաց-կամաց դինովանում եր ու վո-  
դիորվում, բաժակը ձեռքին բացականչեց. —

— Շնորհակալ եմ ընկերներ, խորհրդակին իշխա-  
նությունից ել բանվորներից ել շնորհակալ եմ.,.

Մենք ըղավեցինք ուռում...

Մաշինիստկա Ամալիան ասեց, — յես եմ յերգում  
ինժեների կենացի վրա, — ու սկսեց բարակ ձայնով  
«թռուամեցավ կարմիր վարդը»: Նա աչքերը հառել եր  
առաստաղին ու կարծես նվազում եր: Հազիվ ելինք  
զսպում ծիծաղներաւ:

Բունլաթը լուռ եր, մեկ-մեկ ել բաժակը չխկաց-  
նում եր սրա-նըս բաժակին ու չեր խմում:

— Տովարիշչա Լինա, հն ինչ թավուր յերգ ա յեր-  
գում ա, — հարցնում եր կամացուկ:

Լիսլը հրաշալի քեֆ անող ե յեղեր, — յես չելի իմա-  
ցել, նա լավ պարում եր, մոտենում եր ինձ շուտ-շուտ  
հարցնում. —

— Կենա ջան, հո չմս նեղանում:

Բենսն ելի հարբել եր. մոտենում եր Մանկային,  
ուզում եր կատակներ անելը իսկ նա ճշում եր ու կըպ-  
չում ինժեներին:

Սեղբակը բղավեց Բենոյի վրա.

— Բենն լազաթը մի տահի, քեֆը թող իրա կար-  
գովը գնաւ.

Ինժեներ Բարխուզարյանի վրա դինին շատ շուտ  
աղջկց.

— Բնիկը Լենա, սրանց պիս լեզեք, — ասեց նա  
ակնարկելով կողքի աղջիկներին. Նրանք հենվել եյին  
ինժեների ուսերին:

Յես չպատասխանեցի, զգալով նրա հարբած պիճա-  
կը և չուզեցի նման խռովակցությունը շարունակելը,  
մենակ թափահարեցի ուսերու:

— Ես ձեռիս մազոլիները վկա, ջահելի զվաճի եմ  
ստացել՝ ինչ վոր մեր իշխանությունն ընկավ, այ իմ  
դլաթի ընկերները, — ասեց Սեղբակն ու համբուրեց  
Բունյաթի ճակատը. Առիթից ոգտվելով՝ Ամալիան ու  
ինժեներն ել համբուրվեցին:

— Եդ չեղավ, եդ գիշերվա դրադ տեղի բան ա,  
դուք ծուռն եք գնում, — ասեց Սեղբակը. — ընկեր ու-  
րիորդներ, յես ձեզ նկատություն եմ անում — շա-  
րունակեց նա լրջությամբ:

— Դուք բանություն եք գործադրում, — ասացին  
աղջիկները, իսկ ինժեները վոչ վոքի չեր լսում:

Լիպը, թե — ըրավին, ընկեր Սեղբակ, կեցցե մեր  
թամադին, հանքափոր պատաշան:

— Այ քու հոգուն մատադ, իմ սրտի տղա յես, —  
պատասխանեց Սեղբակը բաժակը չխկացնելով:

Գիշերվա ժամը 3-ին քեֆը վերջացրինք, Ամալիան

և Մանյան ինժեների յերկու թևերն ընկած առաջուց դուրս լեկան. նրանք յերգում ելին — «Թառամեցավ»:

Մենք զբոհ տալով դուրս լեկանք ու խմբովին ակսեցինք յերգել.

«Եյ ինձորիկ մուր ես գլորվում»...

Բարձր շատ բարձր հնչեց մեր յերգը. Մանյալի և Ամալիայի ձայները նվազ ու բարակ՝ խեղղվեցին մեր յերգի մեջ:

Մեղրակն ու Բունյաթը վաղուց արդեն քննել եցին, իսկ մենք յերիտասարդներս զվարճանում ելինք: Խռանում եր, յերք գնացինք մեր տները:

Քո՞ լեն Ա.

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

Բանվորական ճաշարանում սպասում ելի Լիովին: Ներս մտավ Լիովը և նրա հետ Հայկը, վորը բարեկամաբար սեղմեց իմ ձեռքը՝ կապտավլուն աչքերը հառնելով ինձ վրա: Կարծես մեր մեջ վոչինչ չեր պատահել ու նոր միայն իրար հանդիպած ընկերներ եցինք: Անցյալը մոռացվել եր, այժմ յես նրան նայում ելի շատ հանգիստ ու ժպտում եյի հիշելով ավելի յերիտասարդական բռնկումներս: Մենք խոսում ելինք միութենական աշխատանքներից. Հայկը լեկել եր բանվորական բջիջն ուսումնասիրելու և զեկուցում պիտի տար վորակի, և արտադրողականության բարձրացման մասին:

Մենք ճաշարանից դուրս լեկանք. Լիովը շատապ գործ ուներ, գնաց. մնացինք յես ու Հայկը:

— Աենա, ամուսնացիք ես, — հարցրեց նա մեզ  
տռնով։

— Այո, — պատասխանեցի յիս հպարտ։

— Բայց դիտեմ Աենա, յիս հետո իմացա ու գնա-  
հատեցի, դու լավ աղջիկ ելիք…

— Իբոլն իսկական քո սրտի տղա ի՞ն, — շարունա-  
կեց նա։

Յերբեք, յերբեք նա չեր խոսել ինձ հետ այդպես  
անկեղծ ու մտերմարար։ Հետո նրանից իմացա, վոր  
Նորիկի հետ ել յերկար չի տպրել, նորիկն ուրիշ զա-  
գառ ե գնացել, իսկ իրեն տեղափոխում են կենտրոն։  
Յես չելի խոսում, ել ինչ պիտի ասեցի, ամեն ինչ  
ասված եր — ժամանակին առաջ ե դնում մենք ել ժա-  
մանակի հետ, ել ինչ ճնից խռովելինք։

Մենք բաժանվեցինք կոմյերիտական փոխագարձ  
հարգանքով ու սովորական ընկերների պես։

ԱԵՆԱ

## ՎԵՐՁԻՆ ՆԱՍՏԱԿԸ

Եկմա, այս անդամ կարճ նամակով քեզ շատ բան  
եմ դրում։ Թիգիսների պես համառոտ։ Կոմսոմոլի աշ-  
խատանքներից ինձ աղատեցին, վորովհետեւ յիս դի-  
մում ելի տվել և այլիս հնարավորություն չունելի  
դրսուղերը գնալու։ Ինձ նշանակեցին բանվորական ա-  
կումբի վարիչ, հենց իրենք բանվորները առաջարկե-  
ցին, ինձ համար լավ ե, հնարավորություն կունենամ  
շատ կարդալու ու բարձրացնելու իմ տեսական մա-  
կարդակը։

Եիմա, այդ ել իմացիր, վոր արդեն կուսակցական

եմ, այժմ ավելի շատ ոլարտականություններ ունեմ և  
մտահոգություններ:

Ախր, գիտես, Կիմա, շուտով մայր եմ դառնալու:  
Այժմ մտահոգված եմ, վոր մասուր ունենանք, ալդ ուղ-  
ղությամբ աշխատանք եմ տանում աշխատավոր կա-  
նանց մեջ. յերեխ մեզ կհաջողվի մի փոքրիկ մասուր  
ունենալ Ալլահվերդում:

Լիպին ուղարկեցին սովորելու. մի քիչ տիրեցի,  
սակայն այն միտքը, վոր նա վերադառնալու լե դի-  
տությամբ ու վորպես մեր մասնագետը՝ զբանով յես  
վոգեորվում եմ ու ժամանակը յերեխ շատ արագ  
կանցնի:

Կիմա, քո վերջին նամակն այնպես մեղմ եր ու  
վոգեորիչ:

Յես համոզվեցի, վոր դու ինձ ճանաչեցիր ու ել  
յես նախատում: Դրա համար յես ուրախ եմ ու մը-  
տերմորեն սեղմում եմ քո ձեռքը:

ԼԵՆԱ

1929 թ.  
Հարաբեկսա

## ԿՈՄՈՒՆԱՑԻ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

1

Արերի հետ հեղինեվ վազում եր նա, Աննան կոմսոմոլկա, Աննան թռվուն:

Բիբերից կրակներ եյին թափվում, նա հրապուրիչ եր:

— Աննա, աշխուզք Աննա, լավ կոմսոմոլկա, — առում եյին կոմսոմոլիստները, յերբ Աննան հակածառում եր, յերբ Աննան անընկճելի յեր:

Աննան նրանց հետ եր, կոմսոմոլիստների շրջանում, կոմսոմոլիստները կատակում ելին Աննայի հետ: Կըշկում եր Աննան, խփում եր նրանց ուսերին:

— Ձեզ հետ այնքան ուրախ եմ, լավ ընկերներ եք, բայց տեսեք. — յետ-յետ քաշվեց ու ավելացրեց լըրդորեն, — դուք տղաներդ մի քիչ խարդախ եք, ձեղ հետ այնքան ել բարեկամաբար չպետք ե վերաբերվել Նկատում եյի, վոր յերբ կոմսոմոլիստկա Բեման ժողովներում արտահայտվում եր՝ դուք ինչպես իրար աչքով եյիք անում... յես գիտեմ, դուք խարդախ եք:

— Ընդհակառակը, Աննա, մենք իրախուսում ենք, յերբ կոմսոմոլիստկաներն ակտիվանում են, սակայն լինչ անենք, վոր դուք կուսկածամիտ եք, — սպատասիսանեց մի կոմսոմոլիստ:

— Յես դեռ այնքան պիտի աշխատեմ, չե՞ վոք

կինը շան և հետ մնացել. չե՞զ վոր մեր որերում եղած նրան մի քիչ թերագնահատում են, — ասեց Աննան գլուխը բարձր պահած:

— Ո՛, Աննային հարկավոր և արիբունա, նա հըրաշալի ճառախոս է, աղաղակեցին կոմսոմոլիստները  
— Ինչով եմ իմ մնում ձեղանից, — պատասխանեց Աննան ու փախավ:

Սրդյութ Աննան կսիրի ու կամուսնանմ, — վիճում ելին կոմսոմոլիստները:

— Սիրել, ամուսնանալ. Բնչ մեջանական տերմիններ են դրանք, — առարկեց Սուրենը, բջիջի քարտուղարը, — ասեք ընկերակցել, ընկեր ունենալ. մենք հնի հետ դործ չունենք, յերբ ասում ենք՝ կոմսոմոլիստ, կոմսոմոլիստկա՝ հասկանում ենք նորը, նոր կենցաղի կառուցողները:

— Դու ամենից ջերմեռանդ նոր կենցաղայինն ես, — ասաց մի ուրիշ կոմսոմոլիստ:

— Հը՛մ, — հպարտացավ Սուրենը,

— Հը՛մ, — ժպտացին կոմսոմոլիստները,

## 2

Յերիտասարդից կլանքն արագություն և պահանջում: Սուրենն արագություն եր, նա կոմսոմոլ մի պըտառուն անիմը եր:

Աշխատանքները կարդին ելին գնում, սակայն, ինչ վոր մի բան եր միշտ պակասում, մանավանդ, յերբ մենակ եր մնում՝ հատկապես զգում եր այդ: Ուզում եր կարդաք բայց համբերությունը հատած, գիրքը հըրում եր մի կողմ ու կանգնում մտածկոտ: «Սաստիկ

հոգնուծ եմ, հանգստանամ. դեսից-դենից հաճելի բաներ հիշեմ, մի փոքր ել զբաղվնմ իմ անհատական կյանքով։ Առա մարմինը ձգած, ձեռքերը կոտրատելով գոչում եր.

— Յերիտասարդություն, վորքան հուղումնալից ես զու, վորքան բացեր ունես, վոր պիտի լրացնես, — քայլում եր սենյակի մեջ, հետո պառկում անկողնու վրա:

«Հարկավոր ե Աննայի հետ ավելի մտերմանալ. Աննան լով աղջիկ ե, Աննան հրաշալի յե։ Աննային վոչ միայն իրրե լավ ընկեր, այլ նաև իրրե հետաքըրքըրական աղջկա կարելի յե սիրել։ Նա կոմսոմոլիկա յե, նրա հետ այդպիսի կապը կաշկանդիչ չի լինի»։ — Մտածում եր նու ու անհանգստանում, վոտքերով բոթում եր պատն ու հանկարծ տեղից կանգնում։

---

Հուզպերով, հույսերով մոտեցավ Աննային։

— Աննա, ինձ ընկեր՝ գարձիր, սիրելի Աննա, — այզում նրան հանդիպեց Սուրենն ու վերջապես հայտնեց իր մտադրությունը։

— Յես քո ընկերն եմ, դու ել ուրիշների պես լավ տղա յես, — պատասխանեց Աննան հանգիստ ու պարզամիտ տոնով։

— Զե, ուրիշ կերպ։ Ո՞, ինչ դժվար եք հասկանում աղջիկներդ. ավելի քան մոտիկ, սերտ ընկերներ լին ենք։

Աննան շփոթվեց,

— Ռւզում ես ասել ամուսնանմնք։

— Հա, թեկուզ ամուսնանմնք։

Աննայի մտքով այդպիսի բան դեռ չեր անցել.

առաջին անգամն զգաց, վոր իր դիմացը կանդնած և  
տղաւընկերը:

— «Հավ կոմսոմոլիստ ե, մերոնցից ե, չար զիտա-  
վորություններ չունի, միշտ պաշտպանել ե կոմսոմո-  
լիստկաներին։ Ինչու չսիրեմ», — մտածեց Աննան։

— Աննա, դու խելացի լիս, մեր հասարակական  
կյանքին շատ ոգտակար կլինես. լիս կաջակցեմ, վոր  
դու առաջադիմես։ Յես կոմսոմոլիստ, դու կոմսոմո-  
լիստկա, ինչ ե պակասում մեղ, — խոսում եր Սուրենը  
վոգեորգած։

Նա ուզում եր վազել ծառերը զբկել, ապա Աննա-  
յին գրկել։ Նա ուզում եր հրատապ միտինգ լիներ,  
վոր ինքը բարձրանար ու ճառ արտասաներ՝ Աննայի  
նման կոմսոմոլիստկաների համար։

— Մենք ընտանիք պիտի կազմենք, — հարցրեց  
Աննան, զսպելով նոր հուզումները։

— Աննա, դրա մասին դեռ չարժն խոսել դու մեշ-  
չան աղջիկներից չես, վոր հավիտենական կտալի խըն-  
դիր դնես։ Դու կոմսոմոլիստ լիս, հասկանմամբ ես, աղա-  
տամիտ Աննա։

Նրանց աչքերը հանդիսակեցին իրար, յերկու զույգ  
կրակներ հասկացան իրար։ Յերկու յերիտասարդներ,  
յերկուսն ել անհամբեր... համբուրվեցին ծառուղում։

### 3

Այգու ծառերը թարմ տերեներով ծածկված կանա-  
չին ելին տալիս. արդեն գարուն եր, իր բոլոր հրա-  
պույրներով։ Մառուղիներում զույգեր, յեռլակներ ելին  
զբոսնում։

Կանաչ լորենու տակ, նստարանի վրա, մի փոքր  
իրարից հեռու՝ նստած ելին նրանք։

— Ի՞նչ ես մտածում, Սուրեն, այս անորոշ դրությունը յերկամբ ե շարունակվելու, — ասաց Աննան, վորի այտերը դալկացել ելին ու լաքաներով ծածկվել:

— Ի՞նչ անորոշ դրություն, պարզ խոսիր, — զուսպ ձայնով հարցրեց Սուրենը:

— Այս, վոր պիտի միասին ապրենք, չե՞ վոր յերեխա չեմ ունենալու...

Սուրենը ճռճռացնում եր թերթը, վորը փոված եր ծնկներին. մերթ մոտեցնում եր աչքերին, վորպես թե ուղում եր կարգալ:

— Կատարլալ պատիժ, խաթա ընկա: Ի՞նչ ե, իմ ընկերներից յես յետ պիտի մնամ. գուցե ինձ ուղարկեն Մոսկվա սովորելու: Ծնառնիքի հոգս: Այդ եր պակաս հասարակական, աշխատանքներին կապված յերիտասարդին, ուժի, ինչպես եմ նեղվում, այսպիսի ժանր-մունք, առողյա հարցերից:

Մի քանի վայրկյան լուս Աննան նայեց նրան.

— Ուրեմն յես ի՞նչ եմ, ուրեմն ինձ այժմ ուրիշ աչքով ես նայում, ինչպես ելիր վոգեորված խոստումներ անում, միայն մին ժամանակ...

— Միայն այն ժամանակ, ալո, — կըկնեց Սուրենը, — բա ի՞նչ ես կարծում, յերիտասարդն ալդպես ե. ամեն ինչի վոգեորությամբ ե մոտենում, բայց հետո կարող ե սխալված լինել: Դու կոմսոմոլիստկա յես, հասկացող աղջիկ, չես մտածում, վոր իմ ճանապարհին քար ես դնում: Վերջացրու ալդ լակոտին պրծիր...

Աննայի զեմքը խառնվեց, Աննայի աչքերը վառվեցին:

— Վերջացնեմ յերբ հինգ ամսակմն ե արդեն, յերբ անհնամք ե: Սուրեն, յես չեմի կարծում, Սուրեն դու

բոլորովին փոխված ես... Աննալի ձայնը հուզմունքից դողաց, գլուխը բարձրացրեց ու հեղնանքով ավելացրեց.

— Վախկնա, խարդախ կոմսոմոլիստ, դե..., — ուղում եր գնալ.

— Աննա, — նրա փեշից ձգեց Սուրենն ու մեղմաձայն ասաց.

— Աննա ջան, վիժում կատարիր, ելի մենք լավ ընկերներ կլինենք, հետո կմտածենք մեր իյանքը դասավորելու մասին:

— «Հետո կմտածենք». — ալդպես ես ասել միշտ, — կրկնեց Աննան սուր հեղնությամբ, — դու, վոր վերջերս անկուսակցական աղջիկների առաջ ինձ վիրավորում ելիր ու խուսափում ինձանից, կարծում ես քեւթելի: Միշտ կրկնում ելիր. «Աննա, լավ չե, վոր միասին լինենք, մերոնք կասեն՝ թութիւալած ամուսիններ: Աննա մենք նոր կենցաղի մարդիկ ենք, հենց թեկուզ քեզ համար վատ և վոր իմ կինը համարենք: — Քա ալդ հասկացողություններով քեզ նոր կենցաղային ես համարում: Շատ ներեցի, բայց ել չեմ կարող, իսս ինքնասիրություն ունեմ, ել պըթավ...

— «Ինչպես, ալս վիճակում ելի չի՞ ընկճվել, ուղղակի կատաղում եմ. չերանի թե մի մեշչանկայի հետ կապվեյի, նա ալսպիսի խոսքեր չեր համարձակվի ինձ ասեց: — մտածում եր Սուրենը:

Յերբ նա գլուխը բարձրացրեց՝ Աննան հասել երծառուղու վերջը:

Սուրենը ջղաձգորեն թերթը մոտեցնում եր աչքերին, իբր թե կարդամ եր:

Կարծես Աննան հիվանդ եր. նա մերթ-մերթ եր մի-  
այն յերկում ժողովներում, կարծես Աննան առաջվա-  
աղջիկը չեր. առաջվա պես չեր հնչում զնդուն ծիծա-  
ղը. Հետո յերկար ժամանակ նա չհայտնվեց:

— Ո՞ւր և Աննան:

— Ո՞ւր և մեր ուրախ կոմսոմոլիստկան, — հարց-  
նում ելին իրար կոմսոմոլիստները:

Խուլ լուրեր ելին պատում, վոր Աննան յերեխա լի  
ունեցել վոր խայտառակ նախատինքով հալրը տա-  
նից գուրս և արել նրան, և չգիտեն այժմ մւր և  
Աննան:

— Աննա, լավ կոմսոմոլիստկա, մվ եր սպասում.  
Բնչ գմբախտություն, — խոսում ելին ընկերները:

Ամեն անգամ յերբ խոսք եր լինում Աննայի մա-  
սին, Սուրենը դեմքը տհաճորեն կնճռում եր. Նա ալլ-  
ես խուսափում եր ընկերների հետ նոր կենցաղի մա-  
սին խոսելուց, մանավանդ յերբ հարցերը կոնկրետ ե-  
յին լինում: Նա միշտ թափահարում եր գլուխն ու  
ասում:

— Ժամանակ միք կորցնի, նոր կենցաղն ինքն ի-  
րեն կլինի, Բնչ եք գլուխ կոտրում: Այժմ ով ինչպես  
ուզում ե թող ապրի:

Յերբ առանձին եր մնում, Սուրենը մտածում եր.

— Շիմ առաջ դեռ այնքան հեռանկարներ կան,  
իսկ ընտանիքը խոչընդուռ եր: Մեղավիր եմ միթե,  
թհղ Աննան չհամաձայնվեր...»:

Նա կրծոտում եր շրթունքները, առաջվա պես ի-  
րեն հանգիստ չեր զգում, գժգոհում եր իրենից ու շը-  
շընջում.

— Աննան լավ աղջիկ եր, յես նրա հետ վատ վար-  
վեցի: Ո՞ւ, այդ ճուաը վոր չլիներ, յես և Աննան ա-  
ռաջվա պես լավ ընկերներ կլինելինք: Ե՞ն վերջապես  
թնչ եմ եսքան մտածում. մենք հավիտենական կապ  
չենք ընդունում, ախր մարդ մեկից ձանձրանում ե...  
ես հարցերն առորյա լեն, թողնեմ, մենք կոմունիզմի  
համար ենք պայքարում..., — ապա տարակուսում եր  
ու բարձր գոչում, — ես նոր կենցաղն ել մի խոշոք  
ցավ ե, չդիտենք, չդիտենք ինչպես վարվել...

## 5

Յերեկո լեր: Քաղաքի նեղ, վոլորուն փողոցով, լե-  
րիտասարդ մի կին, կապոցի պես մի բան գրկած  
անցնում եր արագ:

«Յեթե չվերցնեն, յեթե մերժեն, ի՞նչ պիտի անեմ,  
վժրտեղ պահեմ, չե, կինդրեմ, կաղաչեմ, վոր վերցնեն»:

Մսուրի դուռը ծեծում եր շտապ, ջղաձղորեն. թե-  
վերը հոգնել եին, շնչառությունը կտրվում եր:

Սպիտակ գոկնոցով մի քույր փնթվնթալով դուռը  
բացեց.

— Ո՞վ եք, ի՞նչ եք ուզում. հմ, ելի՞ յերեխա:

— Յերեխա, իմն ե. մամ պետք ե դիմել մանկանո  
ընդունելու համար, — հարցրեց յերիտասարդ կինը:

Մի հայացքով վոտից գլուխ նրան շափեց քույրի  
ու հեռացավ:

— «Յերեի կարծեց, թե ո՞վ զիտի, ինչպիսին եմ,  
կամ մի փշացած կին գուցե լինեմ», — մտածում եր  
կինը՝ յերեխան կըծքին սեղմած:

Դժվար թե առաջին հայացքից ճանաչելիք նրան-  
դա Աննան եր, աշխույժ Աննան: Դլուխը բարձրաց-

ըեց, լերը հերթապահ բժշկուհին հարց ու փորձ եր անում:

— Մսուրն իմ միակ հույսն ե, ապա թե վոչ յերեխան կմեռնի, վնչ մի հնար չունեմ ուրիշ տեղ պահելու:

Թույրերը շրջապատել ելին նըան:

— Լավիկն ե, — փսփսում ելին իրար մեջ:

Մանուկն սկսեց ճշալ. մի քույր վերցրեց մոր ձեռքից.

— Ո՛, ինչ լավն ե, ինչ փափլիկ ե,

Մլուս քույրերն ել յերեսը բացին. — Ինչ սիրունիկ ե:

«Ինչպես տնհող ու հպարտ եյի, իսկ այժմ մի տեսակ ճնշում կա զրաս: Ինչքան, ինչքան խոչնդուներ ունենք մենք, իսկ մերոնք, մեր կոմսոմոլիստները հաճույք են ստանում ու հեշտ ե թվում այնպես...»:

Աննան սթափվեց, լերը բժշկուհին մի քանի թըղթեր տվեց.

— Ամբողջ քաղաքում միայն մի մսուր ե, մենք ամենաանպաշտպան նորածիններին ենք ընդունում: Դուք պետք ե դիմեք այդ մարմիններին, վոր մանկանն ընդունենք:

Աննան մոլորված նաև մանկանը: Կարծես բըժշկուհին հասկացավ Աննալի լուռ հալացքն ու մըտահոգվելով ավելացրեց.

— Քանի վոր տեղ չունեք, առայժմ յերեխային թողեք մեզ մոտ:

Աննան մի վոքը ազատ շունչ քաշեց. տիսրամածնայեց բարուրին, ուզում եր գնալ՝ յերեխան ճշաց: Նա վազեց դեպի լերեխան, մայրական լի զգացմունքով.

— Ախը նա քաղցած ե, տվեք կերակրեմ:

— «Ցեթե Սուրենն ինձ ալդքան կոպիտ կերպով յետ չմղեր իրենից, յեթե մի փոքր ել նա մտահոգվեր իմ վիճակով, յերեխ այս նոր զգացմունքներն այսօքան տանջող չելին լինի: Ինչու յեմ տխրում, չե՞ վոր ապագալում բոլոր մանուկները պիտի մսուրներում մեծանան, իսկ մայրական զգացմունքներն ալսքան ուժեղ, այսօքան ընկճող չե՞ն լինի: Ի՞նչ դժվար ե այս բոլորը մեր որերում — մտածում եր Աննան՝ մանկան թաթիկները շրթունքներին հաղած:

## 6

Մի ամիս, իր մանկան մոտ, մսուրում մնաց Աննան:

Շատ շուար բոլորը մտերմացան Աննայի հետ: Յերեխանները փաթաթվում ելին նրան, խաղում, քաշը շուամ փեղերից: Իսկ Աննան իր մանկանը գրկած՝ յերգեր եր ասում ու ալտավում նրանց մեջ:

Հոկտեմբերի ծնունդ եք,  
նոր աշխարհի սերունդ եք.  
լավ, լավ բալիկներ,  
կարմրաթշիկ մանկիկներ...

— Ու, ու, դե, րռնեցեք ինձ:

Յերեխաններն աղմուկով, ճիչով կախ ելին ընկնում նրա փեղերից:

Աննան ելի նույն աշխույժ աղջիկն եր. միայն մի քիչ գունատվել եր ու ավելի հասուն տեսք ստացել:

Աննա, ի՞նչ լավ յերգեր ես ասում. Աննա, ելի յերգիր, թող մանկիկներն ուրախանան:

— Թաղ մանկիկներն ուրախանան, կրկնում եր  
Անան ու շարունակում լելքեց

Անին պատին մեռել ե,  
մնձ տվանդներ թողել ե,  
պոտիկ բալեք, մեծացեք,  
նոր աշխարհը կառուցեք...

— Եհ, կրկնեցեք, փոքրիկներ:

— Պապին... կառու... ցեք... — Թոթովում եյին  
մանուկները:

— Լավ չեք ասում, անպիտաններ, — թափահարում  
եր մատն Աննան:

Մանուկն սկսում եր ճչալ, Աննան դադարեցնում  
եր խաղն ու զբաղվում մանկիկով: Կամ կերակրում  
եր, կամ փաթաթանները փոխում, խփում եր թաթիկ-  
ներին: ու ժամանում...

Գիշերները, յերբ մանկիկները քնած եյին լինում,  
Աննան կամ կարգում եր, կամ զբուցում քույրերի  
հետ:

---

Գիշեր եր, մանուկները մշմշում եյին, Աննան թեք  
եր ընկել իր մանկան կողքին. քույրերը շրջապատել  
եյին նրան:

— Անաս ջան, կոմսոմոլիստկա ջան, պատմիր քո  
կւանքից. բա դուք ինչպես եյիք սիրում իրար, վոր  
չամուսնացաք, — հարցըին քույրերը:

Աննան մի փոքր մտածելուց հետո պատախանեց.

— Այն կոմսոմոլիստը շատ եր վախենում ընտա-  
նիք-կերեխա ունենալուց, — ասում եր «պիտի գնամ  
սովորելու»: Ցես չելի կարող նրան ստիպել ու խան-

գարել, շատ ել թե սիրում եյի, ասացի դնաս բարով ու...

— Զեր բոլմը կոմսոմովիստներն են այդպիս:

— Բոլորը չե, բայց պատահում են, թե մեր կոմսոմովիստների, թե վոչ կոմսոմովիստների մեջ այդպիս մտածողներ:

— Հիմի տիրում ես, Աննա:

— Տիրում ել եմ, բայց ի՞նչ անենք. հիմի մեր կենցաղը կարգին չի կազմակերպվել, դեռ ենքան պիտի պայքարենք մեր սրտի, միջավայրի դեմ: Բայց ամենից շատ մեղ նման մայրերը պիտի տուժեն այդ պայքարի ընթացքում, — պատասխանեց Աննան ու տիրությամբ աշքերը թարթեց:

## 7

Աննան աշխատանք եր վինտում:

Մի որ ել լեկավ Աննան իր մանկանը և մյուս մանկիներին հրաժեշտ տալու: Նրան ուղարկում ելին դյուղ աշխատելու:

— Այդ որն ենքան սեղմեց մանկանն իր կրծքին ու ենքան համրուրեց:

— Ինչքամն լավն ես, բայիկ, ի՞նչ քաղցրիկ ես կուկու. բա բա բա, համբուրում եր թաթիկները:

— Դեռ վոչ վոքի ալսքան չելի կարոտել, այժմ զգում եմ, վոր ենքան պիտի կարոտեմ քեզ: Թողնում եմ քեզ սրանց հետ, իմ մանկիկ, սրանց հետ մեծացիր: Բոլորը քեզ պես լավն են, դու ել նրանց ոկես, բայիկ: Տես, չարտասվես. եստեղ ենքան մայրիկներ ունես դու:

Քույրերն զգացված դիտում ելին Աննային:

— Աննա, մի գնա, մեր լավ Աննա, — ասում ելին-նրանք:

Աննան վերջին անգամ իր ձեռքերով բարուրեց մանկանն ու յերբ համբուրում եր գլուխը՝ աչքերից արցունքները թափվում ելին:

Առաջին անգամն եր Աննան ալդքան վշտահար ու ընկճված:

— Ո՞, այժմ միայն այժմ յս ըմբռնում ու ապրում եմ մայրերի վիճակը, այժմ յս սիրում եմ բոլոր մանուկներին, — շնչում եր Աննան գլուխը մանկան կըծքին զրած:

— Դե, յեկեք մանկիկներ, բոլորիդ ել համբուրեմ յս գնում եմ:

— Ո՞ւր ես գնում, մենք ել ենք դալիս, — նրա փեշերից քաշքառմ ելին մանուկները:

Արցունքոտ աչքերում փալեց մի հաղթական ժըպիտա, Աննան բարձր արտասահնեց.

— Դիտմք փոքրիկներ, մենք գնում ենք դեպի կոմունան...

— Մենք դեպի կոմունյան, — կըկնեցին մի քանի փոքրիկներ:

Բոլորն ել ափսոսանքով ու ցավով հրաժեշտ տվին Աննալին:

Աննան մանկանը գրկած՝ մինչև գուռը գնաց և չեր կարողանում անջատվել:

Մանկիկները ճշում ելին, վորն արցունքոտ աչքերն եր արորում.

— Մի գնա, Անի:

— Դե, վերցրեք, վերցրեք, — յերեխային մեկնեց դեպի քուրը, — չե, ինչ կլինի, թողեք մի քիչ ել նա յեմ պոպղուն աչիկներին:

Մանուկը, մատը բերանում ապշած նայում եղ  
մոլը:

— Մենք գնում ենք դեպի կոմունան, — շշնջաց  
մանկան ականջին ու պինդ-ոլինդ համրութեց:

Շփոթված եր, յերբ դուքս լեկավ փողոց, մի Փոք-  
րիկ փաթեթ թեկի տակը:

Հենց ուղիղ դեպի կայարան շտապեց, ժամի 5-ի  
գնացքին հասնելու։ Փողոցում վոչ վոքի չեր նկատում,  
դլուխը կախ գնում եր։

Նա տանում եր իր հետ քաղցր, բուռն հիշողու-  
թլուններ՝ մանկան ճիշն ու ժպիտները...



122-8674







ԳԱԱ Հիմնարար Գիլ. Գրադ.



FL0044760

(304)

ЧМС 80 б.

510

A  $\frac{1}{8104}$



АРІКС  
Письма комсомолистки  
РНД ССР Арионіе, Фріадль, 1924